

ՅՈՆՈՎԻԶ Լ. ԻՆԺ.
Մասնակցությամբ սփաղբառանապետ
Վ. ԳԱՄԱՑՈՒՆՈՎԻ


ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ
ՍՎԱԴ ՔԱՇ Ը Ծ Ը

18 DEC 2017

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԻ ԱՎԱՂԲԱՅԵՆԱՑԿԵՑ
Վ. Գ.Ս.Ս.ՅՈՒՆԻՎԵՏԵՏ

ԽԱԶ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ՍԼԱՂՔԱԾԵ

Թարգմ. Ռ. ՈՀԱՆՉԱՆՅԱՆ



ՊԵՏՀԱՆԱ

1933

ՅԵՐԵՎԱՆ

ԸՆԴԱԿԱՆԻՐ ԳԱՂԱՓԱՐ ՍՎԱՀԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՐՅԱՆԱԿԱՆԻՐ.—Սվաղի շաղախը խմորի նման նյութ ե, վորի բարակ շերտով ծածկում են մակերեսութները, այսինքն՝ սվաղում էն Այդ նյութը հետագայում պնդանում և կաղմում ե կեղե, վոր կոչում ենք սվաղ կամ ծեփ:

Այն բանվորները, վոր զիտեն թե ինչ նյութերից են պատրաստում շաղախները, զիտեն այդ նյութերի հատկությունները, զիտեն պատրաստել այդ շաղախները և քաշել մակերեսութներին, կոչում են սվաղբաժներ (ծեփագործներ կամ օտուկառներ):

Սվաղի դերը.—Սվաղը միքանի գեղ ունի:
Վորովհետեւ շաղախն սկզբում ջրիկ ե լինում, գրա շնորհիվ հնարավոր ե լինում սվաղվող մակերեսութին տու ցանկացած ձևը, չաճախ նրան տալիս են կոկ մակերեսութի—հարթության ձևը, Սա զեղեցիկ ե, հարմար ե և առողջության հասար լավ ե, վորովհետեւ կոկ ե հարթ մակերեսութը հեշտ ե մաքրվում:

Նրանից հետո, յերբ սվաղը պնդանում ե, պաշտպանում ե քայքայվելուց այն մակերեսութը, վորի վրա քաշված են Բացի գրանից, սվաղը պաշտպանում ե շենքը ցրտից, խլացնում ե ձայնը, իսկ փալտե շենքերում վորոշ շափով ծառայում ե վորպես պաշտպանություն հրդեհից:

Ի՞նչ պետք է զիտենալ սվաղի աշխատանքներ կատարելու համար.—
Սվաղ քաշելը հասարակ գործ չե, Վորպեսպի սվաղն իր իսկական գերը կատարի, պիտք ե՝

- 1) Կարողանալ այնպես պատրաստել շաղախը, վոր նա կարողանա պահպանել իր հիմնական հատկությունները.
- 2) Կարողանալ նախապատրաստել մակերեսութն ինչպես պետք ե, վորպեսպի շաղախի շերտը նրա հետ ամուր կառպվի:
- 3) Կարողանալ շաղախը քաշել վորոշ հաստության շերտով և նրան վորոշ ձև տալ:

ՀՆԹԵԲՑՈՂԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ

Ներկա գրքույկում բոլոր չափումները տրված են մետրական սիստեմի չափերով, վորոնք կրնաք արահայտված են հետևյալ կերպ.
1) Կելոգրամ
2) Գրամ (կելոգրամի մեկ հազարերորդ մասը)
3) Մետր
4) Մանտիկետր (մետրի մեկ հարյուրերորդ մասը)
5) Միլիմետր (մետրի մեկ հազարերորդ մասը)
6) Քառակուսի մետր
7) Առանարդ մետր
8) Լիտր
9) 1 տոկոս (ամբողջի հարյուրերորդ մասը)
10) Լայնությունը 40 սմ, յերկարությունը 50 սմ
կգ
գ
մ
մմ
մմ
ք. մ
լ. մ
լ
1%
40×50 սմ

Սրբագրեց Գար. Հակոբյան



11-2415792

4) [Հաջողեցնել վոր մակերևույթը հարթ լինի և ճաքեր չունենա:

Սվաղի գործում միայն դիտելիքներ ու վարժություն ունենալը դեռ բավական չեւ: Հաճախ աշխատանքի վորակը կախված է բանվորի ուշիմությունից (Փահմից) և դեպի զործն ունեցած բարեխղճությունից ու ուշադիր վերաբերմունքից: Լավ սվաղքայլը պետք է կարողանա ինքը գծադիր պատրաստել և գծագրերը հասկանալ: Նա պիտի ճիշտ աչք ունենա, վորպեսզի սվաղելու ժամանակ կարողանա հյուսնի (գուրգարի) կամ պատշարողի սիսալն ուղղել և իր ձեռքի աշխատանքները հեշտությամբ դուրս բերել:

Սվաղողը պիտի հիշի, վոր իրենից հետո այլևս ուրիշ մարդք չկա, վոր սխանիրն ուղղել, ուստի նրա աշխատանքը պետք է լինի խնամքով և մաքուր: Նա պետք է դիտենա, թե վար դեպքերում և գործ ածվում այս կամ այն շաղախը, մոտավորապես ինչքան նյութ (մատերիալ) և պահանջում այս կամ այն աշխատանքը:

Մատերիալը պետք է բանեցնել խնայողությամբ, դրա մեջ ներկու շահ կա' մատերիալի եկոնոմիա յեւ կատարվում և ժամանակ ենք վաստակում: Անփուլթ վերաբերմունքի դեպքում մատերիալ շատ եւ զնում, իսկ սա նշանակում եւ, վոր շաղախ շատ պետք է պատրաստել, շատ ել պետք է կրել, իսկ դրանից վոչ վոք որուտ չունի:

Շատ կարենոր եւ նույնպես կարողանալ բնական և լավ կեցվածք ընդունել: Ամուր լաստակի վրա բանվորն իրեն անվտանգ եւ զգում, վորից աշխատանքն եւ արագ ու լավ եւ ընթանում:

Սովորելու ենթողությունը.—Ասածներից յերեսում եւ, վոր միանգամից սվաղքաշ դառնալ չի կարելի: Նախ պետք է ուսումնասիրել մատերիալները և սրանց կիրառումը, պետք է սովորել վարպետությունը և ձեռք բերել այն ունակությունները, վորոնցով աշխատանքն արագ եւ զնում և լավ վորակ եւ ունենում:

Հարկավոր եմեկ-յերկու աեղոն սովորել և դիտել զանազան աշխատանքներ, ապա թե կարելի կլինի անկախ վորմե աշխատանք վերցնել: Սովորաբար ուսման տևողությունը զգալիորեն կրծատվում եւ, յեթե սովորում են վոչ թե շենքերի վրա աշխատանքի ժամանակ, այլ հատուկ դպրոցներում: Առհասարակ, ինչքան մարդ ավելի գրագետ ու ուշիմ լինի, այնքան ավելի հեշտ ու արագ կարող եւ սովորել սվաղի գործը:

Ինչ կարգով ե կազմված այս գրքովիք:—Սվաղի աշխատանքները բաղմազան են, նախատեսել բոլոր գեպերը և պատմել միանցանց մասին համարակացները չեւ: Մեր գրքույթի նպատակն եւ անփորձ, վորը կվալիֆիկացիայի բանվորի գիտելիքը բարձրացնել միջակ կվալիֆիկացիայի աստիճանը: Ուստի աշխատելու մեջնք միանք միայն ամենք միայն ամենազվակոր մատերիալների նկարագիրը, տալիս ենք միայն ամենազվակոր մատերիալները և ամենից շատ հանդիպող ու տիպիկ աշխատանքները կատարելու նկարագիրը:

Միայն միքանի զեպքերում, սվաղի աշխատանքների մասին լիակատար ծանոթություն տալու նպատակով, միքանի խոսք լիակատար այն աշխատանքների մասին, վոր սովորաբար կատարում են բարձր կվալիֆիկացիայի սվաղքաշները:

Յեթե ուկնակ սվաղքաշը սովորի, թե ինչպես պետք և կատարել զրքում նկարագրած աշխատանքները, նա արդեն կարող է բավականին վորձված համարվել աշխատանքում: Նա կարող է արդին իրեն անծանոթ աշխատանք ել վերցնել և հավանական եւ, թե ի վորքը դժվարությամբ, բայց և այնպես կկարողանա կատարել իրեն տրված հանձնարարությունը:

Այսպիսով, ընթերցողը նախ կծանոթանա սվաղի գործում պահանջվող ամենազվակոր մատերիալների հետ, նրանց մշակուման նշվող ամենազվակոր պատրաստելու հետ:

Ապա մենք ընթերցողին կծանոթացնենք սվաղի աշխատանքները կատարելու տեխնիկայի հետ:

Աշխատանքների մեծ մասը կազմված է յերեք բոլորպին տարրեր մասերից:

ա) սվաղվող մակերեսույթի նախապատրաստում:

բ) շաղախների քաշելը մակերեսույթին (իսկական սվաղում)

գ) սվաղվող մակերեսույթի վերջնական կարգավորում:

Այս երեք մասերից յուրաքանչյուրը կնկարագրենք բուձին գլխում: Մենք, ըստ հասարակորին, քննության կառնենք բուծող գեպքերը, վորոնք հանդիպում են աշխատանքի այս կամ այն մասը կատարելու ժամանակ:

Հարթ մակերեսույթները սվաղելու հետ ծանոթացներուց հետո, կնկարագրենք, թե ինչպես են գուրս բերվում քիվերը (կարտո, ինչպես պետք է սվաղել շինվածքների առանձին մասերը) և ինչպես պետք է սվաղել պիլույատները¹), լուսամուտների և

1) Պիլույատը նույնպես պուն եւ յերեսի կացրած եւ լինուի լույսը կլոր եւ լինում է կոկ, յերեսի վրան ունասում և վերից վագ ակոսներ:

գոներից շեպիրը և ալլն): Ապա կանգ կառնենք շաղախի, կիրառան
ման հետ կապված մյուս աշխատանքների վրա, ինչպես են՝ լուշ
սամուտնութիւն և գոների շրջանակների շուրջկալումը, լուսամուտ-
ների գոգաւտախտակների աժրացնելը, ուեմոնտի աշխատանքները,
նույնպես և կըով ներկելը:

Վերջապես, մենք առանձին դիմում պետք ենկարագրենք վոչ թե աշխատանքի առանձին մասերը, այլ սվաղի բոլոր տարրերը աշխատանքները միասին։ Վերջում մենք կտանք ընդհանութենութիւնի մի շարք տեղեկություններ (որինակ՝ սվաղի աշխատանքներ կատարելու ամենալավ ժամանակի մասին, սվաղի համար գործ ածվող լաստակների մասին, աշխատանքների անվտանգության կանոնների մասին, ինստրումենտների, արտհագուստի մասին և այլն)։

ԳԼՈՒԽ Ա

ՍՎԱՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ԿՐՄՈՎՈՂ ԱՄԵՆԱԳԼԻՎՈՐ ՄԱՏԵՐԻԱՆԵՐԸ

ի՞նչ ասել ե կապող յեվ իներս մատերիալիստը. - Ավաղի գործում հիմնական մատերիալներն են այն նյութերը, վորոնք ծառալում են շաղախներ պատրաստելու համար:

Այն նյութերը, վորոնց մեջ ջուր ավելացնելուց հետո, ըստ գունակ են պնդանալու և միացնելու իրենց մեջ լցրած մանը պինդ կտորները և դարձնելու մի ընդհանուր զանգված, կոչվում են կապող մատերիալներ, Ամենաշատ տարածված կապող մատերիալներն են ողալին կիրը, ջրաբաշխական կիրը, ալեքսաստրը, ոռմանական և պորտալանդական ցեմենտները:

Իսկ այն մատերիալները, վորոնք մտնում են շաղախի բաղդրության մեջ վորպիս մանր պիհնդ մասնիկներ, կոչվում են նվազեցնող կոմի իներտ մատերիալներ: Նրանք ավելացվում են կապող մատերիալներին, վորպեսզի շաղախներին ամրություն տան, շաղախների չորացումը դանդաղեցնեն, և վորպեսզի շաղախը եժան նստի:

Սվաղի աշխատանքներում վորովես նվազեցնող մատերիալացառապես գործ են ածխում ամառն ու մարմարի մանուռը:

ՈԴԱՑԻՆ ԿԻՄ

Վորովումներ.—Ամենքին հայտնի յե կրտքարը: Ցերը այն
այլումնք հնոցում ու թողնում վոր հանդարտ սառչի, ստացվում
են մոխրագույն կամ գորշ գույնի ծակորեկն կտորներ: Այս նոր
նյութը կոչվում է չիանցքրած կիր: Սա ապահովեն լլանումն ջու-
րը. Ջրի և չիանցքրած կրի միացումից ջերմաստիճանն այնքան
ուժեղ և բարձրանում, վոր ջուրն սկսում ե յեռալ: Զուրը զոլորշի
դառնալով, կրի մեծ կտորները նախ վեր ե ածում մանր կտորների,
ապա դարձնում ե նուրբ փոշի: Դրա հետևանքով կիրը փորփո-
շանում ե, և նրա ծավալը 2—3 անգամ մեծանում ե:

Այս պղոցեաը (գործողութիւնը) կոչվում է «Վրբեաւութ-
գորից հետո ստացված նյութը կոչվում է հանգցած կիր։
Հանդցրած կիրը, իեթե հասցրած և փոշիացած լրութեան,
կոչվում է կրի այլուր։ Յեթե չհանդցրած կիրը հանդցնենք մեծ
քանակութիւնը ջրով, այլրված կիրն ստացվում և վորպես մի
թանձր զանդված (մասսա), վոր կոչվում է կրի խմօս։ Յեթե թույլ-
չտանք, վոր կրի խմորին ոդ առնի, կրի խմորը չի կարող պըն-
դանալ, ուստի ալդպիսի կիրը կոչվում է «ողային կիր» կամ ող-
գորպական կիր։

Յերբեմն չհանդցրած կիրը նախ հանդցնում, դարձնում են փոշի, իսկ հետագայում ջուր են ավելացնում վրան և հասցնում են խմորի զբության:

Սվաղի աշխատանքների համար ամենալավը հասրության կիրքը, վոր չհանդցրած դրությունից միանդամից վեր և ածագությամբ ի հերկար ժամանակ պահպան և ալի դրությամբ:

Զհանգըրած կիբը, յերը յերկար ժամանակ պահպան է առաջ հետում, խոնավություն և ծծում իր մեջ և աստիճանաբար հանգչ չկութիւն ունի, քան այն, վոր հատկապես հանդցվում եւ Վերջին կություն ունի, վոր և ածվում փոշու։ Այդպիսի ալյուրը ավելի ցածր հատկութիւն ունի, քան այն, վոր հատկապես հանդցվում եւ Վերջին կություն ունին ավելի մեծ և լինում, այսինչ առաջին պատող հատկությունն ավելի մեծ և լինում է այդ հատկությունը։

ինքն իրեն քայլացված ալլուրի մըշ ստու և զէ և և
քայլացված կտորտանք, վորոնք կարելի լե նկատել շոշափելով:
Այդ և պատճառը, վոր այդպիսի ալլուրն այնպես նուրբ չե, այն-
քան սպիտակ չե, ինչքան հատկապես հանգըրածը,

Ավաղքաշը պետք է ընտելանա տարբերել կրի ալյուրն ալեռաստրից և կավճից: Վերջինս բոլորովին պետք ական չե սվաղի համար: Այսուը թեթև և կավճից և, ժամավանդ, ալիբատրից: Կրի ալյուրի փոշին կծույի, մարդու փաշտացնում և և աչքերը մրմուացնում: Կրի ալյուրը ձեռքի մեջ սեղմել չի լինում, իսկ ալեռաստրը սեղմկում և ձեռքի միջ:

Խօսես են կիրը հանգնում յիշ ալյուր դարձում, — կիրը հանդցնելով ալյուր դարձնելու համար շինում են տախտակի մի տափարակ և նրա վրա կիտում են չհանգցրած կիրը: Ապա այդ կույտի վրա ջուր են ածում: Վորպեսզի առաջացող տաքությունն ու գուրշին միանգամից չթաշին, կույտի վրա ավագ են ածում:

Ալյուր կարելի յե ստանալ նաև հետեւալ յեղանակով: — չհանդցըրած կիրը լցնում են զամբյուղները, իջեցնում ջրի մեջ ու այդպես թողնում են մի առժամանակ: Ապա այդ թրջված կիրը հանելով, կիտում են կույտերով, և նա հանգչում ե: Կիրը ալյուրի վերածվելու համար, սովորաբար, ջուր և պահանջում իր կես ծավալի չափ կամ ավելի՝ մենչեւ իր ամբողջ ծավալի չափ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՇԻՆՈՒՄ ՏԱՇՏԸ ԿԻՐԸ ԽՄՈՐԻ ՀԱՆԴՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ


Կրի մեծ քանակություն խմորի հանդցնելու համար շինում են հատուկ տաշտա:

Տաշտը (նկ. 1) կաղմկած և 2 արկղից: Ա արկղը շինվում է գետնի մակերեսութիւն, ունենում և սոտ 2 մ, յերկարություն, $1\frac{1}{2}$ մ. լայնություն և մոտ 50 սմ. խորություն: Նրա պատերից մեջ մեջ լինում և ա տնցքը, վորի վրա լինում է մի ցանց, և կարող և փակվել փակիչով:

Յերկրորդ Բ արկղը շինվում է գետնի մեջ, դրա համար փորում են մի փոս՝ մոտ $1\frac{1}{2}$ մ, խորությամբ և 2 մ. լայնությամբ, իսկ յերկարությունը կախված է հանգցվող կրի քանակից: Փոսի հատակն ու պատերը պատում են տախտակներով: Իսկ ճեղքերը ծնվում են ալերաստրով կամ կավով:

Կրի հանգցնելը խմորի: — Տաշտը պատրաստելուց հետո փակիչով փակում են ա անցքը, ապա Ա արկղի մեջ նրա խորության $\frac{1}{3}$ -ի չափ լցնում են չհանգցրած կրի: Միաժամանակ Ա արկղի մեջ ջուր են ածում այնքան, վոր կիրը ծածկվի ջրով: Այս մոմենտից կրին սկսում ե հանգչել: Վորպեսզի հանգչումն ավելի

արագ և լավ կատարվի, կիրը խառնում են թիերով, փոցխերով, ճանդիչներով (նկ. 2) և այլն, և նորից ջուր են ավելացնում: Այդ ժամանակ չափազանց շատ ջերմություն ե արտադրվում, ջուրը յեռում ե, և յերբեմնակի, կրի գանգվածը ցայտում է: Այս հեղուկը շատ կծույի: Նրա յելտուկները (ցայտերը, ցալքունները) կարող են այրել մարդու մարմնը, շրերը, շատ վտանգավոր են աչքերի համար: Ուստի բանվորներին պետք է տալ թաթման նիր և ակնոցներ: Յերբ կիրը բավարար չափով քայլարվում է, բացում են փակիչը, և հեղուկ զանգվածը ցանցի միջով հոսում ե արկղը: Այսպիսով, Ե արկղն և գալիս կրի միանգամայն մաս արկղը: Այսպիսով, Ե արկղն և գալիս կրի կոշտ կտորների, քարերի և պլ խառնուրդների:




Նկ. 1. Տաշտ՝ կիրը հանդցնելու համար

Ապա նորից փակում են ա փակիչ, և Ա արկղը կրկին լըցնում են կրով ու ջրով: Աշխատանքը շարունակում են նախկին ձեռվ, մինչեւ վոր Ե արկղը լցվի կրի խմորով:

Հանգչելու պրոցեսը միաժամանակ շարունակվում է նաև Ե արկղում: Յեթե հանգցվող կիրը նկարագրած ձեռվ մի տաշտից մլուսը չանցկացնենք, այդ գեպքում խմորի մեջ կմնան կրի կը տորներ, քարեր և այլ նման խառնուրդներ, վորոնք կմնան սվաղի հատկությունը:

Նոր հանդցըած թարմ կիրը բանեցնելու համար դեռ պետք քական չեն, նա պետք և բոլորովին սառչի, և խմորը տաշտում պետք ե մնա մի շաբաթից վոչ պակաս: Անհամեմատ ավելի լավ և խմորը տաշտում պահել միքանի ամիս և ել ավելի: Տաշտի մեջ պահում են նրա համար, վոր համողվեն, թե Ե տաշտի մեջ անցած կենդանի կրի ամենափոքր կտորներն անգամ վերջնակա-



Նկ. 2. Փոցիկը և ճանդոփչներ.

նազես հանգել են: Յեթե հանգած կրի փոքրիկ կտորներն ընկնեն կրի շաղախի մեջ, այնտեղից ել սվաղի մեջ, նրանք տեղում կշարունակեն հանգչել, դրա հետևանքով նրանց ծավալը կմեծանա, կուտն ուռչել և թափվել: Յեշ սվաղի մակերեսութը կծածկվի հատ-հատ փոսիկներով - կչեչոտի:

Կրի խմորի յերեսը, յերը յերկար ժամանակով են թողնում տաշտում, ծածկում են 15—20 սմ. հաստության ավագի շերտով, ապա ծածկում են տախտակներով և վրայից հող են լցնում: Այդպիսի ծածկութից կրին այլևս ող չի առնում, և խմորը չի պընդանում:

Յեթե կրի քանակը քիչ ե, նրան հանգնում են տակառներում, կիսատակառներում, վորմազըրի արկղներում և ալին: Այստեղ ել անհրաժեշտ և խնամքով խառնել կիրը և թողնել, մինչեւ վոր լիովին հանգչի ու սառչի, ալսինքն՝ 7 որից վոչ պակաս:

Յեթե կիրը քիչ քանակությամբ և խառնուրդ պարունակում (մինչև 10%), համարվում ե պարագա կրի: Հանգնելիս նրա ծավալը 2—3 անգամ մեծանում է և իր 3—4 ծավալի շափ ջուր և պահանջում: Նրանից ստացվող խմորը շոշափելիս թվում ե թիւ յուղու և:

10—20% խառնուրդ պարունակող կիրը կոչվում ե վիթ

կիր: Հանգնելիս նրա ծավալը մեծանում է 1—2 անգամ և ջուր և լողունում իր $1\frac{1}{2}$ —3 ծավալի չափ: Նվազ կրից ստացվում է կոշտ և վոչ միապաղաղ խմոր:

Կրի ալյուրից խմոր պատրասելը կատարվում է մոտավորապես նույն կերպ, ինչպես կիրն են հանգնում խմորի: Ստացվող զանգվածը ցանցապատ անցքով անցկացնելը պարտադիր չե, բայց անհրաժեշտ և նրան խնամքով խառնել, մինչև վոր ստացվի միապաղաղ խմոր:

Տարվա ցուրտ ինդանակներին ավելի լավ և ալյուրը հանգընել գոլ ջրով, վորից կիրն ավելի շուտ և ավելի լավ և հանգչում:

Պրակտիկան ցուց ե տալիս, վոր կիրը հանգնելիս չպետք ե միանգամից շատ ջուր լցնել, վորովհետեւ բանվորը կարող է չնկատել, թե բոլոր կողմերին ել ջուր առել և թե վոչ, և արդդեպում կարող են մնալ չհանգած կտորներ:

Փոքր պատրաստումների դեպում սվազ անողներն իրենք են հանգնում կիրը, իսկ խոշոր պատրաստումների դեպում կրի հանգնելու գործով զբաղվում են հատկապես ալդ ալիտատանքի համար նշանակված սեագործ բանվորներ: Նրանց զեկուարում և աշխատանքներին հսկում և մի փորձված սվարքաց:

ՀԻԴՐԱՎԱԼԻՔ ԿԱՄ ԶՐԱԲԱՇԽԱԿԱՆ ԿԻՐ

Վարուսամեթ.— Այն կիրը, վոր կարող ե պնդանալ Հրի ներկայությամբ և դրանով տարբերվում ե ողային կրից, կոչվում ե նիդրալիք կիր: Զրի կամ խոնավության բացակայությունը չի խանգարում ալդ պնդանալուն:

Այս կիրն ստացվում ե այնպիսի կրաքարեր այրելուց, վորոնք իրենց մեջ պարունակում են կավի փոքր քանակություն և կոչվում են մերզելիներ:

Այրելուց հետո ստացվում ե դեղնավուն գորշ գույնի կիր: Հիգրավիք կրի նանցցնելը, Հիգրավիք կիրն ավելի զանգաղ և հանգչում, քան ողայինը և ավելի քիչ շերմություն և արձակում:

Հիգրավիք կիրը հանգնելու համար փոռում են 10—15 սմ. հաստության շերտով և ցնցուղներից ջուր են լցնում վրան, ապա թիակներով մեծ կույտ են կազմում և վրան ավագ են ածում: Կույտում կիրը հանգչում ե և դառնում փոշի: 10—20 որ անցնե-

լուց հետո հանգած կիրը մաղում են:

Վորքան շատ կիր ե պարունակում մերզելը, այնքան նրանից ստացվող կրի խմորն ավելի արագ ե պնդանում: Հիդրավլիք ուժեղ կիրը չը ի մեջ պնդանում ե շաղախելուց մի քանի ժամ անց, իսկ թուլլը՝ Յ շարաթ հետո:

Հիդրավլիք կիրը պետք ե հանգնել գործածելուց քիչ առաջ, այնինչ ողային կիրը հանգնելուց հետո պետք ե լերկար ժամանակով հանդիստ թողնել:

ԱԼԵԲԱՍՏՐ

Ալեբաստրն ստացվում և գիպսի քարն այրելուց: Գիպսի քուն աղոթք զարձնում են նարին (նուրը) փոշի կամ մինչ աշը կամ այլելուց հետո: Ստացվում և սպիտակ, մոխրագույն կամ վարդագույն կոշտ փոշի:

Խշոր աղացած ալեբաստրն ավելացնում են ովաղի համար գործածվող կրի շաղախներին, իսկ նարին աղացածը գործ են ածում կարնիդների համար և կիրպարվեստի մեջ:

Ալեբաստրի շաղախը բռնելուն պես (հենց վոր փոշին ածում են ջրի մեջ ու խառնում), մի քանի ըռպեից հետո սկսում ե պընդանալ:

Ցերկար ժամանակ, մանավանդ խոնավ տեղում պահելուց, ալեբաստրը կորցնում ե իր կաղող հատկությունը, ուստի այն պետք ե գործածել ալբելուց անմիջապես հետո: Խոնավությունից ալեբաստրը քայլավում ե, ուստի գործ ե ածվում ներսի աշխատանքներում և չոր տեղերում:

Արտաքին տեսքով ալեբաստրը նման է թե կրի ալյուրին և թե կավճին: Նրան կարելի է տարբերել հետևյալ նշաններով՝ նա դրանցից ամենածանրն ե, շոշափում ես—կոշտ ե, և ձեռքի մեջ սեղմաքում ե: Ալեբաստրից ու ջրից պատրաստած գնդիկը 2-3 րոպեից հետո պնդանում ե:

ՅԵՄԵՆՏՆԵՐ

Յեմենտը լինում ե 2 տեսակ՝ պորտանդական և ռոմանական: Յերկուսն ել ստացվում են մերգելների ալբելուց և աղալուց: Այն մերգելները, վորոնց մոտ 1₃-ը կավ ե, տալիս են ռոմանական ցեմենտ, իսկ վորոնց 1₄-1₅-ն ե կավ, տալիս են պորտալանդական ցեմենտ:

Պորտանդական ցեմենտ.—Պորտանդական ցեմենտը շատ հաճախ պատրաստում են կավի և կրաքարի միանգամայն վորոշ հարաբերությամբ վերցրած արհեստական խառնուրդից: Այդպիսի խառնուրդն այրում են բարձր տաքության մեջ և աղում-դարձնում են ամենանուրը փոշի՝ մոխրա-կանաչավուն գույնի: Պորտանդական ցեմենտի պատրաստելը պահանջում ե գործարանային բարդ սարքավորում:

Հենց վոր պորտանդական ցեմենտի շաղախը բռնում են, սկսում ե պնդանալ: Պնդանալու ժամանակը տարբեր ե լինում: Սվաղի աշխատանքների համար գերադասում են այնպիսի ցեմենտ, վորն սկսում ե ամբանալ 20-30 րոպեյից հետո:

Ռոմանական ցեմենտն այրում են աշեղի ցածր տաքության մեջ, քան պորտանդականը: Ռոմանական ցեմենտն աղալուց հետո ունենում ե գորշ-դեղնավուն նուրբ փոշու տեսք:

Ռոմանական ցեմենտից բռնած շաղախը շատ արագ ե պընդանում, վորքան թարմ լինի, այնքան արագ կպնդանա: Ուստի շատ թարմ ցեմենտները պետք ե մի քանի ժամանակ պահել պահենալ:

Ընդհակառակն, յեթե հարկավոր ե լերկար ժամանակ պառկած ցեմենտի պնդանալը արագացնել, նրան թեթևակի տաքացնում են:

Պորտանդական ցեմենտը սվաղի աշխատանքներում գործեն ածում աշեղի խոնավ տեղերում, և նրա պնդացած շաղախն ավելի ամուր ե համարվում, քան ռոմանական ցեմենտի շաղախը:

Յեմենտի փարերումն.—Պորտանդական և ռոմանական ցեմենտները ծախսում են փակ տակառներով: Մի տակառում մաքուր ցեմենտի քաշն ե (նետո) 155 կգ., իսկ ցեմենտը տակառի հետ (բրուտտո) կշռում ե մոտ 165 կգ, Քաշն ստուգելու համար բավական ե վորոշել տակառի քաշը ցեմենտի հետ միասին (բրուտտո):

Ա Վ Ա Զ


Սվաղի տեսակները.—Լեռնային տեսակները ջրի, ողի և տեսակառի ազդեցությունից քայլքայլելով՝ վեր են ածվում մանրիկ հատիկների, այս հատիկներին ասում ենք ավաղ: Ավաղը, ինչպես ասացինք, ամեն տեսակի շաղախների համար ծառալում ե վոր պես վախտացնող (նվազեցնող) մատերիալ:

Նայած թե վնասեղ ե գտնվում, ավազը կարող ե լինել լեռնալին, գետային և ծովային:

Նրա հատիկներն ունենում են տարբեր խոշորություն: Մանր ավազը կազմված ե մինչեւ $\frac{1}{2}$ մմ. լայնություն ունեցող հատիկներից և գործ ե ածվում սվաղի վերին շերտերի համար, Միջակ խոշորության ավազը կազմված ե $\frac{1}{2}-2$ մմ լայնություն ունեցող հատիկներից և գործ ե ածվում սվաղի ստորին շերտերի համար շաղախ պատրաստելիս: Իսկ խոշոր ավազը, վոր ունենում է 2-5 մմ լայնության հատիկներ, գործ ե ածվում բետոն պատրաստելու համար:

Ավաղի մեջ կարող են լինել խառնուրդներ՝ տիղմ, կափ, հող, քարեր, ծառի կեղեկի կտորտանք, աղ և այլն: Այս խառնուրդները պակսեցնում են ավաղի միացման ուժը կապող նյութերի հետ: Բացի այդ, բնության մեջ պատահող ավազը կազմված է լինում տարբեր խոշորության հատիկներից, ուստի անհրաժեշտ ե ավազը մաղել և մաքրել խառնուրդներից:

Ավաղի մաղելն: —Մաղումը կատարում են կամ քարամաղով կամ ձեռքի մաղերով (նկ 3): Խոշոր խառնուրդներից մաքրելու համար ավաղն անց են կացնում քարամաղի ցանցով, վորի անցքերը լինում են 10×10 -ից մինչև 15×15 մմ. քարմաղը կանգնեցնում են թեք, և, թիտկով, վարից վեր շարժենով, ավազը ցցում են նրա վրա: Ավաղն անցնում ե անցքերով, իսկ մաղի վրա մնում են ավելի խոշոր մասերը՝ քարերը, կափի և հողի կտորները, կեղեր և այլն:



Նկ. 3. քարմաղ և ձեռքի մաղեր.

Մանր խառնուրդը ջոկելը շատ դժվար է, ստիպված են լինում ավազը լվանար Այդ պատճառով սվաղի աշխատանքների

համար պետք ե վերցնել գետի ավազ, վոր արդեն լիացված ե ջրի բնական հոսանքով: Իսկ ծովագին ու լեռնային ավազը լավ ե լերբեք չբանեցնել:

Քարամաղով անցկացրած մաքուր ավազը պետք ե գալիս սվաղի ստորին շերտերի համար: Իսկ վերին շերտի համար ավազը մաղում են ձեռքի մաղով: Դրանից հետո ստացված մանր ավաղի շնորհիվ ստացվում ե ավելի հարթ, ավելի քիչ խորթուրություն ունեցող սվաղ:

Մաղելու համար մաղի մեջ ածում են մի քիչ ավազ և մաղը թեթևակի թափահարում են: Ցեթե մաղը մի կտոր ցանց և առանց խեմքի¹⁾, մաղելու համար փոխեփոխ քիչ բարձրացնում են ցանցի մերթ այս, մերթ մչուս ծայրը, և ավազը ցանցի միջից ցած և թափվում:

Գետի ավազը լեռնայինից տարբերվում է գույնով և հատիկների ձևով: Գետի ավազը մոխրագույն է, իսկ լեռնայինը՝ դեղնա-կարմրավուն: Գետի ավաղի հատիկները լինում են կոր, համեմատարար մաքուր, իսկ ինքը ավաղը՝ շաղ անցող: Լեռնայինի հատիկները տակ են, յերբեմն մեջը յերեսում են հողի կամ կավի կտորներ, իսկ ինքը՝ ավազը ձեռքի մեջ սեղմանում է:

Նորմալ խռնավության մաքուր ավազը ձեռքի մեջ չպետք ե սեղմանի, իսկ ցեթե տրորենք մատներիս արանքում, նա չպետք ե կեղտոտի մատները: Վորքան շատ են խառնուրդներն ավաղի մեջ, այնքան ավելի հեշտությամբ ենա սեղմանում և այնքան ավելի լինեղտոտում մատները:

Զ Ո Ւ Ր

Չուրն ըստ հետարագորին պետք ե մաքուր լինի: Անենալավը պետի կամ անձրեսի ջուրն ե: Լավ և նույնութեա աղբյուրի ջուրը, ցեթե մեջը չկան աղեր: Ծովային ջուրն այս պատճառով բոլորովին անպետք ե: Անպետք ե նաև նեխած ջուրը:

Առհասարակ, աղի ներկայությունը ինչպիս ջրում, նույնպես և ավազում վնասում ե սվաղին: Ազը խռնավություն ե կլանում ողից, և սվազը խռնավանում ե: Չուրը գործ են ածում սվազվող մակերեսութները թրջելու և շաղախներ պատրաստելու համար:

Ալերասարի աշխատանքներում գերազանցի յե վերցնել սառը ջուր, վոր ալերասարը դանդաղ պսդանա:

¹⁾ Առանց փայտե լրջանակի

Փայտից պատրաստած յերկար ու բարակ շերտերը կոչվում են բաղդադի, վորի յերկարությունը սովորաբար, լինում է $1\frac{1}{2}$ - 2 մ., իսկ հաստությունը $2\cdot 3$ մմ.: Այս չափերը միշտ չեն պահպանվում: Բաղդադիքը խփելուց առաջ տեսակավորում են՝
 ա) բաղդադի ցածի շարքը խփելու համար (տակի շարք);
 բ) բաղդադի վերի շարքը խփելու համար (յերեսի շարք);
 գ) բաղդադի, վոր գործի համար անպետք ե:

Տակի շարքի համար ընտրում են լայն, նեղ, բարակ, կարճ, կոստղոտ բաղդադիք: Յերեսի շարքի համար ընտրում են ամենալավերը, վորոնք պիտի լինեն ուղիղ, ամբողջ յերկարությամբ ունենան նույն լայնությունն ու հաստությունը, բայց շատ հաստ չինեն:

Հաստ բաղդադիքն՝ ավելի լավ ե բոլորովին խոտանե (բրակ ամել), վորովնետու նրանց յերկարության գծով սվաղի վրա հեշտությամբ առաջանում են ճաքեր: Խոտանվում են բրակ են արգում) նույնպես թաց բաղդադիքը և այն բաղդադիքը, վորոնք փոտակամբ առաջանում են նշաններ ունեն: Այդպիսի բաղդադիքն շուտով փուլմ ե և փուլթյամբ վարակում ե պատի փայտե մասերը:

Բաղդադիքների ընթելլը:— Բաղդադիքն ընտրում են իրենք՝ սվաղքաշները: Այս աշխատանքի համար ամենից հարմար են ըստաել գորև ցածը առարկալի վրա, վորի բարձրությունը լինի $15\text{--}20$ սմ., որինակ՝ շեմքի վրա, գերանի վրա, իրար վրա դարսած 2-3 աղյուսի վրա և այլն:

Բաղդադիքի խորձերը բաց են անում, զնում են իրենց առջև՝ ծայրերը դեպի իրենց: Միանգամից վեցնում են ձախ ձեռքը մի փոքր խորձ բաղդադիք,

իսկ աշ ձեռքով ջոկլովում են ու



գարսում ըստ տեսակների:
 Զախ կողմում դնում են այն նկ. 4. Դանակ.
 բաղդադիքը, վորոնք պիտանի լին տակի շարքի համար, իսկ աջ կողմում դնում են յերեսի շարքի համար ընտրած բաղդադիքը:

Եթե ընտրելու ժամանակ պատահեն շատ լայն բաղդադիք, դանակով (նկ. 4) ճեղքում, են, ապա թե վոչ՝ նրանք կուռչեն և կփչացնեն սվաղը:

Միանուն ժամանակ, հաստ, վրան կեղև ունեցող, փոտած, թաց և բոլորովին անպետք բաղդադիքը շարտում են մի կողմէ:

Շինարարական աշխատանքներում գործածվող թաղիքը (քեչա) շինում (լմկում) են կովի մաղից Նրանք լինում են քառանկյունի և մեջը դատարկ: յերկարությունը լինում է 1 մ 75 սմ, իսկ լայնությունը՝ 1 մ 40 սմ:

Թաղիքը պիտի լինի չոր և բավական ամուր լմկած: Սվաղի աշխատանքներում գործ են ածում թաղիքի ցածը տեսակները: Նա գլխավորապես գործ ե ածվում փայտե առաստաղները և պատերը խփելու համար:

Թաղիքը նպաստում ե, վոր շաղախն ավելի լավ կպչի սվաղի վող մակերեսութիւն: Միաժամանակ, նա պահպանում ե տաքությունը և վատ ե անցկացնում ձախը:

Պետք ե նկատել նաև, վոր թաղիքը չի բոցավառվում, այլ մեղմ կերպով ալրվում ե: Իսկ նրա պակասությունն այն ե, վոր նրա մեջ հեշտությամբ ե ցեց ընկնում:

ԽՍԻՐ

Ձլողի հյուսվածքը կոչվում ե խսիր. Նա պատրաստվում ե 2 մ. յերկար. և 1 մ. լայնությամբ (կրծատ գրում ենք 2×1 մ.): Ձլողը, վորից պատրաստում են խսիրը, պետք ե լինի թարմ և վոչ փոսած:

Խսիրն ել սվաղի գործներում խփում են նույն դեպքերում, ինչ դեպքերում վոր խփում են թաղիքը, բայց իր հատկությամբ խսիրը ցած ե թաղիքից, թեև նրանից զգալիորեն եժան ե:

ՄԱՐՄԱՐԻ ՑԵՎ ԳՐԱՆԻՏԻ ՄԱՆՐՈՒԻՐ

Մարմարի և գրանիտի մանրացրած կտորները կոչվում են մանրուի: Մանրուիք տեսակավորում են ըստ կտորների խոշորության և այդ ձեռք ել գործածում հատուկ շաղախների մեջ: Այսպիսի շաղախները բանեցնում են ալսպես կոչված՝ մարմարի սվաղներում:

Շաղախի համար գործածվող մանրուիք պետք ե լինի մաքուր, առանց փոշու և առանց կողմանակի խառնուրդների:

Սվաղի գործում բանեցնում են լերկաթալարի 32 մմ. յերկարության մեխեր, վորոնք կոչվում են սվաղի մեխեր: Համեմատաբար սակավ դեպքերում զործ են ածվում նաև այլ չափսի մեխեր, Ստորև ամեն առանձին դեպքում ցուց կտրվի տարրեր աշխատանքներում գործածվող մեխերի տեսակը:

Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչ բան է սվաղը:
2. Ի՞նչ նպասակով են սվաղում շենքերի մակերեսութները:
3. Ի՞նչի համար են ժառայում կապող և իներա նյութերը:
4. Ի՞նչպիսի կրեր կան և ի՞նչպես են նրանց հանգիստը:
5. Ի՞նչում ե կայանում ողային և հիգրավիք կրերի տարրերությունը:
6. Վեր այսութերն ունեն հիգրավիք համարություն:
7. Ի՞նչնի են տարրերում իրարից կրի այլուրը, ալիբաստը ու կտիճը:
8. Ի՞նչպիսի ցեմենտներ կան և ի՞նչպես են նրանք իրարից տարրերում գույնով:
9. Ցեմենտը հանգիստ պահանջում ե:
10. Ի՞նչ հատկություններ ունի լավ սվաղը:
11. Ի՞նչպիսի ջուրն ե անպետք սվաղի ախտատանքների համար:
12. Ի՞նչպես են անսակավորում բաղդադիքը և ի՞նչպիսի բաղդադիներ են դեն գցում:

Գ Լ Ո Ւ Խ III.

ՇԱՂԱԽՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ընդհանուր հատկություններ.—Կապող նյութի խառնուրդն սվաղի հետ, կամ, առանց սվաղի, ջրի հետ, կոչվում է շաղախնայած կիրառվող կապող նյութի հատկություններին, շաղախները կարող են լինել:

1) ողային—վորոնք ընդունակ են պնդանալու ողի ներկայաթյամբ (այսինքն՝ յերբ նրանց ող և առնում) և կազմված են լինում ողային (ածխաթթվալին) կրից, ալիբաստից, կավից.

2) հիգրավիլին—վորոնք ընդունակ են պնդանալու վոչ միայն ողի մեջ, այլև ջրում: Դրանք են՝ հիգրավիլիք կրից, ոռմանական և պորտանդական ցեմենտներից պատրաստած շաղախները, կամ այն շաղախները, վոր պատրաստած են ողային կրից՝ հիշալ նիութերի խառնուրդով:

Շաղախները կրում են այն անունը, վոր համապատասխանում է նրանց մեջ մտնող կապող նյութին, որինակ, ասում ենք՝ կրի, ցեմենտի, ալիբաստրի շաղախն և այլն:

Ենթե շաղախը պարունակում է 2 կապող նյութ, կոչվում ե բարդ կամ խառը, որինակ՝ կրա-ցեմենտալին, կրա-ալիբաստրալին շաղախն:

Շաղախը պետք է խնամքով խառնել, մինչեւ վոր ստացվի միապաղաղ զանդաված:

Իսչպես ասացինք, ավաղն ավելացնում են, վորպեսդի:

1) շաղախը պնդանալիս նրա վրա ճաքեր չառաջանան:

2) վորպեսդի շաղախը չորանալուց հետո ավելի ևս ամուր մինի:

3) շաղախի արժեքն իջեցնելու համար:

Նոյած թիվ կապող նյութի մեկ միավորին վհրքան ավազ և ավելացվում, շաղախը կարող է համարվել պարարտ, միջակ պատուալիքան և վիթք: Իսկ շաղախին ավելի կամ պակաս յերկար ժամանակ, նաև շաղախի մեջ մտնող կապող նյութին: Բանվելու վերջը համարում են այն մոմենտը, երբ լեզունդը շաղախի յերեսին սեղմելիս հետք չի թողնում: Բանվելու ժամանակ շաղախը տաքանում է: Իսկ շաղախի պնդանալը շարունակի լուս և դեռ շատ յերկար ժամանակ, մի քանի գեպը երաւմ—շատ տարիների ընթացքում:


Շաղախի բանվելը վոր սկսվում է, այլև չպետք է նրան խանդաբեր, զրանից շաղախի կապող հատկությունները շատ անթուանում, և ամրանալուց հետո նրա պնդությունը պակաս է մինում:

Այս բոլորը, ինչ վոր ստացինք բոնվելու մասին, չի վերաբերում կավին և կավային շաղախներին: Սբանց ամրանալն առաջանում է «իալն չոր» նույնուց:

Սկաղի արկի պատրաստելը.—Շաղախ պատրաստելու համար տախտակից պատրաստում են մի արկի՝ վոտքերով (նկ. 5): Արկի չափսերը կարող են տարբեր լինել: Սովորաբար շինում են հետեւալ չափսերի՝ յերկարությունը 1 մ—1 մ 20 սմ., լայնու-

թյունը՝ 60—70 սմ., խորությունը՝ 20—25 սմ. Արկղը դրանից խոր տնել պետք չի, ապա թե վոչ՝ դժվար կլինի նրանից շաղախը վերցնել:

Արկղի ամբողջ բարձրությունը, վոտքերն ել հետո, միջին թվով՝ լինում ե մոտ 60 սմ. վոտքերից մի զուգը 10—15 սմ. բարձր ե լինում միուս զուգից. ուստի արկղի հատակը լինում ե թեք:



Նկ. 5. Սվաղի արկղ.

ԿՐԱՑԻՆ ՇԱՂԱԽՆԵՐ

Շաղախի պատրաստելու համար սվաղի արկղի մեջ դնում են կրախմորի վորոշ քանակություն. Ապա վրան ածում են նույն քան ավագ. Այդ ամբողջը խառնում են լերկաթե թիակով. Յերբ ստացվում ե միւպաղաղ զանգված, նորից ովազ են ածում ո նորից խնամքով խառնում:

Նայած թե խմորը վնրքան պարարտ ե, նրա մի մասին ավելացնում են 2—4 մաս ավագ. իսկ ավելացվելիք ջրի քանակը կախված ե մեր ցանկությունից՝ ավելի թմնած, թե ջրիկ շաղախ ենք կամենում ստանալ.

Սվաղեաները սովորաբար պատրաստում են թանձր կրային շաղախի, իսկ սվաղի ժամանակ, լերբ պետք ե, ջուր են լըդ նում վրան, ջրկացնում են:

Թիակը, վորով խառնում են, պետք ե ունենա քառակուսի ձև (նկ. 6): Այդ ձևի թիակով արկղի անկլուներում գտնվող շաղախը վերցնելը հեշտ ե և, հենց սրա շնորհիվ, կարելի լի լինում ավելի լավ խառնել:

Կրի շաղախով սվաղում են աղլուսե, բետոնե և քարե պատերի արտաքին և ներքին մակերևույթները:

Արտաքին աշխատանքների համար կարելի յե վերցնել համամատաբար ավելի խոշոր ավագ, քան ներքին աշխատանքների համար:

Վորպեսզի յերեսը հարթ ստացվի, յերեսի շերտի համար շաղախը պատրաստում են մանր ավագից:

Առանձնապես մաքուր աշխատանքանջված դեպքում ավագը, յերբեմն նաև պատրաստի շաղախն անց են կացնում մաղի միջով:



Նկ. 6. Թիակ.

ԱԼԵԲԱՍՏՐԻ ՇԱՂԱԽՆԵՐ

Ալեբաստրի շաղախն իրենից ներկայացնում ե ալեբաստրի և ջրի միացում: Ալեպիսի շաղախը շատ արագ ե բռնվում, ուստի պետք ե պատրաստել փոքր քանակներով:

Շաղախը պատրաստելու համար մի փոքր ալեբաստր են ածում արկղի ցածի մասը: Ապա միանդամից ածում են այնքան ջուր, ինչքան վոր պետք ե և խառնում են:

Պատրաստած շաղախը պետք ե անմիջապես գործի դնել հակառակ գեպքում նա կսկսի բռնվել. Եթե նրան նորից սկսեք խառնել, թարմացնել, նա այլն չի ունենա նախկին կապուտը:

Վորպեսզի բռնվելն ուշացնեն, ալեբաստրի շաղախը ջրիկ են անում կամ ավելացնում են բացած սոսնձի փոքր քանակություն:

Ալեբաստրի շաղախն ամրանալիս, նկատելի կերպով պաթառում ե, ծափալն ել ավելանում ե:

Սվաղի աշխատանքներում ալեբաստրի շաղախը մաքուր դրությամբ ստավագ ե կիրառվում: Մեծ մասամբ նա ավելացվում ե կրի շաղախին:

Ալեբաստրի շաղախները խոնավության ազդեցությունից քարություն են, ուստի գործ են ածվում միայն ներսի չոր սեղակներում:

ԿԱՎԻՇ ՇԱՂԱԽՆԵՐ

Կավի շաղախները պատրաստում են, տախտակից շինած մակերեռւթի վրա՝ լերկար ժամանակ խառնելով ու տրոքելով կավը ավազը և ջուրը: Այս կավը, վոր իր սեջ պարո նակում ե ավազի չնչին քանակություն, կոչվում ե պարագ կավ, իսկ լեթե ավազի խառնուրդ շատ ունի, կոչվում ե վտիս կավ:

Վորպեսզի ստանան գործի համար պետքական կավ, վերցնում են միջակ պարարտության կավ, վոր պարունակում ե ավազի ծավալի $\frac{1}{2}-\frac{1}{3}$ -ի չափ: Իսկ լեթե կավը պարարտ ե, նրան վտիտացնում են, ալսինքն՝ ավելացնում են վորով քանակությամբ ավազ:

Շատ հաճախ էավ պատրաստելիս վոտքերով են տրոքում, վորն առողջության հայտը մշասակար ե, ուստի խորհուրդ չենք տալիս: Յերեմի այդ նպատակով գործ են ածում փալտե թիեր՝ (նկ. 7) կամ տոփաններ:

Այս շաղախները գործ են
ածվում պատերին կավի
սվաղ քաշելու ժամանակ:

Նկ. 7. Թի.

Կավի շաղախից, համեմատաբար, սակավ զեպքերում են սվաղ անում, այն հե մերմիության միայն միքանի ուսյուններում: Ուստի մենք նրանց վրա կանգ չենք առնի:

ՑԵՄԵՆՏԻ ՇԱՂԱԽՆԵՐ

Ցեմենտի և շատ թե քիչ քանակության ավազի ջրի մեջ բանած միապաղաղ խառնուրդը կոչվում ե ցեմենտի շաղախ:

Սվազի գործում շատ պարարտ ցեմենտի շաղախները ստակավ են գործազրվում: Էստ մեծի մասին, ցեմենտի մեկ ծավալին վերցնում են 3—4 ծավալ ավազ:

Նախախի պատրաստելու համար արկղի մեջ ածում են խխտ վորով քանակական հարաբերություններով չոր ցեմենտ և չոր ավազ: Ցեմենտն ու ավազը դեռևս չոր դրության մեջ խառնում են յերկաթե թիակով, արկղի մի ծարքից սինչե մյուսը: Ալդ խառնուրդն այնքան են խառնում, վոր այլևս հնար չի լինում ցեմենտը տարրերել ավազից:

Ալդ չոր խառնուրդը հավաքում են արկղի վերի մասում:

ցածի աղատ մասը ջուր են ածում և թիակով կամ ծեփիչով (մալախով) խառնուրդի մի մասը խառնում են ջրի հետ:

Շաղախի այս առաջին քանակը բանեցնելուց հետո, նույն ձեռվ պատրաստում են հետեւալները: Այդպես են վարվում այն նպատակով, վոր կարողանան բանեցնել շաղախը, քանի դեռ նա չի սկսել պնդանալ (բռնվել): Շաղախը նոր վոր սկսում ե բռնվել նրան գեռ կարելի ին նորից ջրկացնել (թարմացնել), բայց դրանից հետո այլևս նախկին ուժը չի ունենա:

Նույն նկատառությունով պետք չի չոր խառնուրդ պատրաստել ավելի քան $\frac{1}{2}-2$ ժամի համար: Յեթե նկատվում ե, վոր սվաղքաշն այդքան ժամանակում չի կարողանում ծախսել պատրաստած չոր խառնուրդի քանակը, նոր պատրաստությունի ժամանակ նրա քանակը պակսեցնում են:

Արկղում մերած ցեմենտի շաղախը պետք ե անմիջապես ամբողջովին բանեցնել և վոչ մի դեպքում չի կարող թողնվել հետեւվալ որվան, նույնիսկ չի կարելի թողնել ճաշի համար տրվող ընդմիջումի ժամանակ:

Ցեմենտի շաղախ պատրաստելիս, ավելի քան ուրիշ շաղախների դեպքում, անհրաժեշտ ե ունենալ ճիշտ և խնամքով վերաբերմունք դեպի աշխատանքը: Արկղը պետք ե լավ մաքրվի, պետք ե գործածել գետի մաքուր ու մաղած ավազ: Ցեմենտի և ավազի քանակական հարաբերությունները պետք ե խիստ պահպանել, խառնուրդը ինամքով խառնել:

Խոշոր աշխատանքներում չոր ավազը պատրաստում են քիչ հեռու և ուղարկում են սվաղքաշն՝ պատրաստած:

Ցեմենտի շաղախների բաղադրությունն ընդունված ե անվանել այսպես՝ մեկին յերկու (1:2), մեկին չորս (1:4) և այլն: Այս նշանակում ե, վոր ծավալով հաշված ցեմենտի 1 մասին պետք ե խառնել առաջին դեպքում 2 մաս, իսկ յերկրորդ դեպքում՝ չորս մաս ավազ:

Բերենք մի քանի ավազներ, վորոնք վորոշում են ցեմենտի, ավազի և ջրի քանակը՝ 1 խմ ցեմենտ պատրաստելու համար (տես հետեւալ յերեսի աղյուսակը):

Միջին պարաբռության ցեմենտի շաղախները (1:3, 1:4), ըստ մեծի մասին, կիրառվում են սովորական սվաղի համար խոսնավ տեղերում:

Պարաբռ շաղախները (1:1, 1:2) գործ են ածում այնպիսի տեղերում, ուր կամենում են ջրի ծծվելու դեմք առնել, որինտեկ՝

ըետոնե ավազաններ սվաղելիս: Սովորաբար, այդպիսի սվազը ծածկում են միայն ցեմենտից պատրաստած շաղախի մի բարակ շերտով, վորպեսզի ստանան առանձնապես կոկ մակերևութ:

Բաղադրություն	Տ Ե Մ Ե Ն Ա Ռ		Ա Վ Ա Զ	Զ Ո Ւ Յ
	Խ Մ	Կ Մ		
1 : 4	0,26	կամ 300,0	1,00	170,0
1 : 3	0,34	> 390,0	1,00	190,0
1 : 2	0,50	> 580,6	0,98	240,0
1 : 1	0,74	> 860,0	0,73	300,0

Վորպեսզի սվազն ամենահին ջուր չանցկացնի, շաղախը պատրաստում են վոչ թե ջրով, այլ հատուկ բաղադրություններով, վորոնց/ց ամենից հաջողն ե ցերեզիտը: Ցերեզիտը ծախզում ե արտաժանի պես բաց-կրնմի գույնի հեղուկի տեսքով:

Ցեմենտի շաղախը ցերեզիտով պատրաստելու համար նախապիս պատրաստում են ցեմենտի և ավազի չոր խառնուրդը: Միաժամանակ, ցերեզիտի մի մաս խառնում են ջրի 10 մասի հետ (ըստ ծավալի): Ստացվում է ցերեզիտի կոթ: Ուրեմն, ջրի փոխարեն, այս կաթով են մերում ցեմենտի և ավազի խառնուրդը, մինչև վոր շաղախն ունենա նորմալ սվազի շաղախի խոնավություն:

Ցեմենտի շաղախները կիրառվում են նույնպես և ֆասադներ սվազելիս: Այս դեպքում ավազը հաճախ փոխարինում են մարմարի կամ այլ մանրությով, վորոշ մշակումից (յերեսը ծեծելոց, կոփերոց) հետո ալզպիսի սվազի մակերեսութն ստանում ե բնական քրի տեսք:

ԿՐԱ-ԱԼԵԲԱՍՏՐԱՅԻՆ ՇԱՂԱԶ

Կրա-ալեբաստրային շաղախ պատրաստելու համար սվազի արկղի ցածր կողմում մերում են ալեբաստրի շաղախի փոքր քառակություն: Արկղի վերևի կողմից ծեփիչով կտրում են ալիսեղ գտնվող կրի շաղախից մի մաս և խառնում են ալեբաստրի շաղախի հետ:

Կրա-ալեբաստրային շաղախը պատրաստում են այնպիսի քանակությամբ, վոր կարելի լինի սպառել մի քանի բողելի լութացքում:

Կրին ալեբաստր ավելացնելուց շաղախի բռնվելն ու պնդանալն արագանում ե, և ալղպիսի շաղախն ավելի լավ և կապակցվում փալտե մակերեւութերի հետ:

Ալսպիսի շաղախը կիրառվում է փալտե պատեր ու առաստաղներ սվազելիս, քիվեր (կարնիզներ) քաշելիս և այն խընամքում աշխատանքներում, ուր պահանջվում ե ստանալ առանձնապես կոկ մակերեւութիւն: Խոնավության յենթակա տեղերում այս շաղախը չի կարող կիրառվել:

ԿՐԱ-ՑԵՄԵՆՏԱՅԻՆ ՇԱՂԱԶ

Կրա-ցեմենտային շաղախը մի խմոր ե, վոր ստացվում է ցեմենտի ու ավազի խառնուրդից, վորը բաց են անում կրային կաթով:

Ալղպիսի շաղախ պատրաստելու համար ամենից առաջ սվազի արկղում խառնում են չոր գրությամբ ցեմենտ և ավազ՝ վորոշ համեմատությամբ: Ալղա ունկավոր դուզի մեջ զնում են կրային խմորի վորոշ քանակություն ու վրան ջուր ավելացնելով քացում—հասցնում են կաթի դրության: Այս կրային կաթով արդեն մաս-մաս մերում են ցեմենտի ու ավազի չոր խառնուրդը:

Կրա-ցեմենտային շաղախի այս կերպ մերելը համարվում է ամենալավ ձևը, վորովհետեւ այդ գեղագում հեղությամբ և հալող գումարված հավասարապես խառնելը:

Կրա-ցեմենտային շաղախներն ալսպես են բնորոշում՝ մեկ, մեկ, վեց (1:1:6) և այլն. այս՝ 3 թվանշաններից առաջինը ցուց ե տակի ցեմենտի ծավալը, երկրորդը՝ կրային խմորի ծավալը, և երրորդը՝ ավազի ծավալը:

Սվազների համար գործ են ածում միջակ ամրության շաղախներ, այսինքն՝ 1:1:8, 1:1:10, 1:2:10 բաղադրության:

Կրա-ցեմենտային շաղախները կիրառվում են չոր կամ վոր ստանձնապես խոնավ տեղերում սվազ անելիս:

Բարդ շաղախները գործ են գրվում ցեմենտի շաղախով կատարվող սվազի աշխատանքը հեշտացնելու կամ կրով կատարվող սվազի ամրությունն ավելացնելու համար:

1. Ի՞նչ նպատակով են ավազը խաւնում շտպաթին:
2. Վեր շաղախներն են կոչվում ոդային և փորոնք—հիգրավլեք:
3. Ի՞նչ բան է շաղախի բանվելը:
4. Ինչու սպազի արկղին կսթիր չեն անում, իսկ փոաքերն անում են տարբեր բարձրության:
5. Ի՞նչպես են պատրաստում կրի շաղախն:
6. Ինչու չի կարելի միանդամից պատրաստել ալեբասարչ լաղախ մեծ քանակությամբ:
7. Ի՞նչպես են պատրաստում ցեմենտի շաղախը:
8. Ի՞նչ նպատակով և ինչպես են պատրաստում բարդ շաղախները:
9. Շաղախներ պատրաստելիս ինչպիսի պայմաններն են ապահովում նրանց հատկությունը:
10. Վեր դեպքերում են օվաղում կրի շաղախով, ցեմենտի լաղախով և վո՞ր գեղքերում բարդ շաղախով:

ԳԼՈՒԽ IV

ՍԼԱՂՎՈՂ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Սվաղման յենթակա ամեն մի մակերեռույթ պետք ե լինի այնպիսի դրության, վոր շաղախը հնարավորություն ունենա նրա հետ կապվելու: Առա համար, սվաղվող մակերեռույթները պետք ե համապատասխան կերպով նախապատրաստել, նախած թե նրանք ինչ նլութից են շինված: Ընդհանուր կանոն ե, վոր նրանք սիեց ե ունենան անհարթություններ կամ խորդորդություններ և լազ մաքրված լինեն ամեն տեսակի կեղտոտվածքից:

Յեթե մակերեռույթի նյութը խոնավություն ծծելու հատկություն ունի, մակերեռույթին ջուր են շաղ տալիս: Առանց արտ նախազգուշության, մակերեռույթը ջուր կզողանար շաղախից և սվաղի հատկությունը դրանից կվատանար:

ԱՂՅՈՒՄԵ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Աղյուսն ունենում ե խորդուրորդ մակերեռվթ, վոր վորոշ շափով ապահովում ե շաղախի կպչելը նրան: Բայց և այնպիս սպատակար ե մակերեռույթի վրա գտնվող անհարթությունների քանակն ավելացնել:

Գատարկ կարերով շարվածք:—Այս նպատակով շարվածքն առում են դատարկ կարերով (նկ. 8): Սա կալանում ե նրանում,

վոր շարվածքի յերեսի և կարերը մոտ 2 սմ-ի չափ թողնում են դատարկ, նրանց մեջ շաղախ չեն դնում. այդ դեպքում ն սվաղի շաղախը մտնում ե և կարերի մեջ:


Իսկ յերբ շարվածքն արված ե լինում լիքը կարերով, ոգտակար ե կարերն խստակել, ալսինքն՝ նրանց միջից շաղախը դուրս տալ՝ կամ թե կտկովածք անել:

Կակտվածք:—Յեթե շարվածքն առաջուց սպիտակացրած կամ սվաղած ե, սովորաբար, մակերեռվթը նորոգում են կտկովածքով: Կտկովածքն անում են այն դեպքերում, յերբ շարվածքը շատ հին ե, յերբ մակերեռույթը բորբունել ե կամ շատ կեղտոտ ե:

Մակերեռույթին կտկուվածքը են անում բութ կացնի կամ վառարանագործի քլունգի հարվածներով (նկ. 9): Կտկովածքը բավական կլինի անել 3-5 մմ խորությամբ: Կտկովածքի ակոսների մոտիկությունն իրարից՝ կախված ե շարվածքի մակերեռույթի բնույթից:

Նկ. 8. Դատարկ կարերով շարվածք.

Նկ. 9. Բութ կացին և վառարանագործի քլունգ:



Նկ. 8. Դատարկ կարերով շարվածք:

Միջին թվով, ակոսների հեռավորությունը մեկը միուսից կարելի յե հաշվել 5 սմ:

Կտկովածքից հետո մակերևույթը մաքրում են կոշտ ավելով
և շաղախը քաշելուց առաջ ջուր են շաղ տալիս վրան:

Ինչպես շատ խոր կտկովածքը, նույնպես ել շատ խոր դա-
տարկ կարերը վատացնում են սվաղի հատկությունը. Ստացվում
ե տարբեր տեղերում տարրեր հաստության սվաղ, վոր անհամա-
չափ ե չորանում և կարող ե ճեղքեր տալ:

Այն ողուսե պատերը, վորոնք կրի շաղախով են շինված,
կարելի լի սվաղել վոչ շուտ, քան նրանց շարելուց մեկ տարի հե-
տո և ահա թե ինչնա Սվաղը շուտ կչորանա և կիանգարի ողին
պատի ներսն անցնելու. Իսկ մենք գիտենք, վոր սովորական շա-
ղախը, առանց ազատ ողի, վատ ե չորանում: Հետեապես, և շար-
վածքը յերկար ժամանակ թաց կմա:

ՔԱՐԵ ՊԱՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ

Քարե պատերի նախապատրաստումն, ընդհանուր առմամբ,
նույնն ե, ինչ վոր աղուսե պատերի նախապատրաստումն. Այս-
տեղ ել պահանջվում ե ինամքով մաքրումն, իսկ բնական ան-
հարթությունների բացակայության դեպքում հարկավոր ե կտկո-
վածք անել:

Չեչոտ քարերից շինած մակերևույթը բավական կլինի մաք-
րել և լվալ, իսկ հարթ մակերևույթը պետք ե կտկտել և սվաղել
կրացեմենտալին շաղախով:

ԲԵՏՈՆԵ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ

Բետոնի մակերևույթները սովորաբար ունենում են մեծ
քանակությամբ խորդուրդություններ, ծակոտիներ և փու-
տեղեր (փոսիկներ):

Այս պատճառով նրանց նախապատրաստելու համար բավա-
կան ե միայն կեղտից մաքրել, շաղախի հոսած հետքերը հեռաց-
նել և խոնավացնել:

Իսկ յեթե բետոնե մակերևույթը հարթ ե, վարվում են
նույնպես, ինչպես նախորդ դեպքերում:

ՀԻՆ ՍՎԱՂԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ

Ծեմոնակի աշխատանքների ժամանակ պատահում ե, վոր հին
սվաղը շատ ամուր և կազմ լինում պատին, այնինչ պրուեկտով
պահանջվում ե, վոր նոր սվաղը հնից ավելի հաստ լինի: Այսպի-

սի դեպքերում կարելի լի հին սվաղը վեր չբերել, այլ դրա փո-
խարեն հին մակերևույթը պետք ե կտկտել, մաքրել փոշուց և
ջրով լվանալ:

ՓԱՅՑԵ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՈՒՄԸ

Փալտե մակերևույթների նախապատրաստումն անհամեմատ-
ավելի դժվար ե, քան աղուսե մակերևույթներինը. Դա նրանից
ե առաջանում, վոր շաղախը փալտին ավելի թուլլ ե կպչում
քան աղուսին կամ քարին:

Հարկավոր ե լինում արհեստական կերպով առաջ բերել
անհարթություններ, վորպեսզի փայտե մակերևույթները պահեն
շաղախը:

Ամենապարզ յեղանակն այն ե, վոր ուրագով քերթեր
են անում մակերևույթի վրա և շաղախը կաշում ե այդ ձևով
ստացված քերթերին և ճեղքերի յեզրերին:

Մյուս յեղանակը կայանում ե նրանում, վոր մակերեվույ-
թին խփում են՝ բաղդադի, յեղեգ, չրփի և այլն: Դրանից հետո
մակերևույթին քաշվող սվաղը մասամբ մտնելով այդ խփվածքի
ճեղքերի մեջ, լավ ե պահվում նրա վրա:

Վորպեսզի շաղախն ավելի լավ կպչի փայտե մակերևույթ-
ներին, նախ քան այդ խփվածքը, մակերևույթին խփում են
թաղիք, խորը կամ շաղախի հետ լավ կոպչող այլ նյութ: Սրա
մի ոգուան ել այն ե, վոր դրանից շենքը տաք անում ե: Այս
դեպքերում կարելի լի կիրառել նաև տոլ և կարտոն:

Փայտե շինվածքները կարելի լի սվաղել միայն այն ժամա-
նակ, յերբ շինվածքը բոլորվին չորացել ու նստել ե, այսինքն՝
նրա պարտելուց 1—2 տարի հետո: Հակառակ դեպքում, շինված-
քի նստելուց բարդադիքը կուռչն, և սվաղը կքարքարվի:

Պատերին և առաստաղին խփվող տախտակները կամ բաղ-
դադիքը պետք ե լինեն, ըստ հարակորին, չոր փայտից Տախ-
տակները շատ յերկար չպետք ե լինեն, վորպեսզի չորանալիս
չծռվն, և սվաղը չքարքարվի:

Ստորև մենք մանրամասն կանգ կառնենք բաղդադիքը
խփելու վրա, վոր խփածքների աճենատարածված տեսակն եւ

ՄԵԿՈՒՄԻՍԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ԽՖԵԼԸ

Թաղիքը կամ խփերը բաց են անում. մկրատով կամ կաց-
նով կտրտում են խորի գլխները և սկսում են խփել սվաղի մուր-

ճով (նկ. 10). Այդ նյութը մակերեսութին ամբացնում են սվաղի մեխերով: Մեկուսիչ նյութը պատերին խփելիս, 2—3 մեխերով նրա գիրնի յեզրը ամբացնում են պատին և թողնում են այդպես կախված: Ապա ձեռքի ափերով հարթում են, թեթևակի ձգում են ցած, ապա կողքերից տեղ-տեղ մեխեր են խփում, վոր ուղիղ մուա մեխնչի բաղդադի խփելը:

Պատերին 10 քմ մատերիալ խփելու համար պահանջվում է 30 ըոպե ժամանակ, 80—120 մեխ, այլ խոսքափ՝ սվաղքաղողը 1 ժամում կարող է կատարել 20—21 քմ խփվածք:

Այդ նույն մատերիալը առաստաղին խփելիս նախ ամբացնում են մատերիալի նեղ գլուխը, ապա ուղղում են, քիչ ձգում են, հետո մեխում են, վոչ միայն յեզրերից, այլև մեջտեղից, վորպեսզի մատերիալը կախ չընկնի:


Այս դեպքում 10 քմ խփվածքի համար պահանջվում է 35 ըոպե ժամանակ, 120—180 մեխ, այսինքն՝ սվաղքաշողը մի ժամում կարող է մատերիալով պատել 17 ք. մ. մակերեսութի:

Տող, կարտոն խփելիս աշխատանքը տարվում է նույն կարգով: Վորպես բնդհանուր կանոն, պետք է հիշել, վոր բարակ մատերիալի (խորի, տոլի և ալլն) առանձին կտորների ծայրենդրերը դրվում են իրար վրա, իսկ հաստ մատերիալների (թաղթիքի և այլն) կտորները դրվում են յեզրը յեզրի կողքին, վորպեսզի այդ տեղերում չգոյանան նկատելի հաստություններ:

Այստեղ պետք է նկատել, վոր խփվածքը տալիս ե շաղախի ամենամեծ եկոնոմիա, և մակերեսութիւնը վորոշ չափով պահպանում է աշխատանքի ժամանակ թրջվելուց:

ԲԱՂԴԱԴԻՔ ԽՓԵԼԸ

Անհարթություններ ստանալու համար փայտի մակերեսութիւններին խփում են բաղդադիք: Յեթե զրանից առաջ մակերեսութիւնների մեխում մեխումիչ մատերիալ, բաղդադիքը նպաստում են նաև այդ մեխուսացումը պահելուն:



Նկ. 10 Սվաղի մուրճ.


Բաղդադի խփելը մեծ ժամանակ է պահանջում: Սվաղքաշողը պետք է սովորի այդ աշխատանքը կատարել արագ և կանոնավոր: Խփելու ձեն իմանալը և հմտությունը շատ կարող են բարձրացնել արտադրականությունը: Մենք տեսնում ենք, վոր սվաղքաշողներից վուանք հաղիվ կարողանում են որպես խփել 12—13 ք. մետր, այսինչ մուռաները նույնքան ժամանակում կարող են կատարել 20—22 քմ նույնպիսի խփվածք, ինը եմ՝ դրանից ել ավելի:

Ինչժամ ե հարցը.—Նրանում, վոր պետք է ուսումնասիրել աշխատանքի վորոշ կանոններ և ընտելանալ ախպես աշխատել վոր հարկ չինի ափելորդ չարժումներ կատարել:

Բաղդադի խփելու բնդիանուր կանոնները.—Բաղդադիքը խթանում են 2 շարք՝ տակի շարք և վերեսի շարք: Յերեսի շարքի բաղդադիքը խփում են տակի շարքի բաղդադիքին գրեթե ուղիղ անկյունով:

Տակի շարքը խփում ե ափելի խիտ, քան յերեսի շարքը: Խփվածքի խտությունը կախված է նրանից, թե ինչ աստիճանի խնամքու աշխատանք ե պահանջվում: Վորպես կանոն, առաստաղի բաղդադիքը քիչ ափելի խիտ են խփում, քան պատերինը:

Տակի շարքում բաղդադիքը խփում են 3—5 ամ



Նկ. 11. Բաղդադիք խփելը

Հեռավորության վրա, իսկ յերեսի շարքում 4—7 սմ: Այսպիսով, բաղդադիքից կազմվում է յերկարուկ վանդակներով մի ցած (նկ. 11):

Սվաղ քաշողը աշխատանքի ամբողջ ընթացքում բազդաղիքը խփում ե իշարից ցուց տված հեռավորության վրա՝ աչքաշափով:

Բաղդադին ամրացվում ե մակերևույթին սվաղի մեխերով, փորոնք խփում են սվաղի մուրճի հարվածներով։ Տակի շարքն սկսում են խփել ձախ անկյունից և հետդիետե շարժվում են դեպի աջ։

Տակի շարքի բաղրադիքի թեքությունն անում են գեպի աջ. ամեն մի բաղդադին ամրացվում ե միայն 2 մեխով. այս մեխերը խփում են բաղդադու մեջ, մոտավորապես, ամեն ծալրից 15 սմ. հեռու, այնպես, վոր մեխը մտնում ե բաղդադու մեջ կիսով չափ։ Պետք ե ընտելանալ մեխը մտցնել մեկ վոչ շատ ուժեղ հարվածով։ Մեխերը կիսով չափ են խփում այն նպատակով, վոր հեշտ լինի նրանց դուրս քաշելը յերեսի շարքը խփելուց հետո։

Յերեսի շարքը խփում են՝ շարժվելով աջից ձախ և բաղդադիքի թեքությունն անում են գեպի ձախ, տակի շարքին գրեթե ուղիղ անկյունով։

Յերեսի շարքը խփում են հետեւյալ կերպ. բաղդադին դնելով տեղը, այն տեղում, ուր նա հատվում է տակի բաղդադու հետ, խփում են մի մեխ մինչև վերջը։ Ապա նույն կերպով ամրացնում են կրա վերի ծալրը, վորից հետո մեխեր են խփում բաղդադու յերկարությամբ՝ տակի շարքի ամեն մի յերկրորդ կամ յերրորդ բաղդադու հետ հատկելու տեղերում։ Այդպես ել վարվում են հետեւյալ բաղդադիների հետ։

Յերեսի շարքի վորոշ տարածություն խփելուց հետո տակի շարքը ուրագի ականջով դուրս են քաշում կիսով չափ խփված մեխերը և տեղն ու տեղը խփում են մոտիկ գտնվող հատման կետը։

Իսկ յեթե տակի շարքին մեխերը խփելինք մինչև վերջը, վոչ միայն ժամանակ վաստակել չելինք կարող, այլև զրա շնորհիվ, մեխ ավելի կծախսելինք։ Իսկ այս յեղանակով մենք ժամանակ ենք վաստակում, վորովհետեւ այս հաշվով միայն հարկավոր ե մեխը դուրս քաշել։ Միայն թե դուրս քաշած մեխը պետք չե դնել գրպանը, ուր գտնվում են մյուս մեխերը։ Իսկ յեթե տակի շարքին մեխը խփելինք մինչև վերջը, ստիպված կլինիլինք. նախ մի ավելորդ հարված տալ ամեն մի մեխին և նոր մեխ վերցնել գրպանից։ Իսկ սրա վրա ավելի ժամանակ կերթա, քան մեխը դուրս քաշելու վրա։

Յերեսի շարքին մեխեր խփելիս, պետք ե վարժվել մեխը խփել Հարվածով։ Ամեն մի ավելորդ հարվածն ուշացնում է աշխատանքը։ Այս աշխատանքով զբաղված սվաղքաշն որական խփում ե միքանի հաղար մեխի, Ամեն մի մեխին տրվող հարվածների թիվը պակեցնելուց թեև աննշան ժամանակ ե վաստակում, բայց զրա շնորհիվ սվաղքաշն որական կարող ե շահել կես ժամ, վորն ավելի լավ ե, վոր նա գործ դնի կամ հանդստանալու կամ արտադրական աշխատանքի վրա։

ԲԱՂԴԱԴԻ ԽՓԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱՆ

Գործի կանգնելով, սվաղքաշը մեխերը լցնում ե լայն գըր պանի կում զոգնոցի մեջ, վորտեղից աղատ կարող ե հանել մեխերը։ Յերեսը պետք չե մեխը բերանը դնել. գրանից աշխատանքում չի արագանա, բայց հեղտությամբ կարող ես քեզ մնաս պատճենել։

Աշխատանքի ժամանակ սվաղ քաշողը, ուրագն աջ ձեռքում բռնած, վերցնում ե բաղդադին, միաժամանակ ձախ ձեռքով գըրպանից հանում ե մեխը և բաղդադին խփում ե տեղը։

Աշխատում ե կանգնած։

Տակի շարքը դատին խփելիս կանգնում ե աջ կողը կիսով չափ պատին դարձրած, ձախ վոտը հետ դրած։ Յերեսի շարքը խփելիս իրեն պահում ե դրա հակառակ ձևով՝ ձախ կողը կիսով չափ դարձնում ե դեպի պատը, աջ վոտն ե հետ դնում։ Պատիցածի մասին բաղդադի խփելիս կամ պետք ե կռանակ, կամ պարզել, բայց չի կարելի չոքել։ Այս գիրքն աշխատանքը չի արագանում, բայց առողջությանը մնասում ե։

Յերեսի խփվածքը մոտենում ե անկյունին կամ մակերևույթի սհամանին, պետք ե լինում բաղդադիքի ծալրերը կոտրել։ Այս ծալրերը չպետք ե զեն ածել, այլ կարելի յե բանցնել նույն անկյուններում նրանց չափերին համապատասխանող տեղերում։


12-րդ նկարում մենք տեսնում ենք, վոր 1 բաղդադուց կոտրած կտորը գործի յե դրած I տեղում։ 2 բաղդադուց կոտրած կտորը գործի յե դրած II տեղում։ 3-րդի կտորը՝ III տեղում և այլն։

Բաղդադիքի ծալրերն ալդ ձեռվ սպագործելը պակսեցնում ե մատերիալի կորուսը, և բանվորը վորոշ չափով ժամանակ ե շահում։

Բաղդադիքի ծայրերը չպետք ե խփել մեկը միուսի վրա, փորպեսզի հաստացումներ չստացվեն, այլ պետք ե դնել ծայրը ծալքի մոտ և այնպես, վոր նրանց միջև մնան փոքրիկ արանքները:

Առաստաղի խփվածքի ժամանակ, ընդհանուր առմամբ, պետք ե պահպանել նույն կանոնները, ինչ վոր պատերի խփվածքի դեպքում:

Լավ խփվածքը պետք ե կատարված լինի միատեսակ մատերիալից, պետք ե ունենա մոտավորապես միևնույն մեծության ուղղանկյուն ձեր վանդակներ և պետք ե ներկալացնի հարթ մակերեսույթ:



Ակ. 12. Անկյուններում բաղդադի խփելը.

Խփվածքի հատկությունը խիստ անդրադառնում ե սվաղի հատկության վրա, և վատ խփվածքի վրա լավորակ սվաղ չէ ստացվի: Ուստի խփվածքի վրա պետք ե լուրջ ուշադրություն դարձնել:

Բաղդադիքի յեղբերի մեջ 5 և 5 սմ կամ 4 և 6 սմ վանդակներ անելիս միջակ հմտության սվաղքաշը 25 բոպերում կարող է կատարել 1 քմ պատի խփվածք, դրա վրա ծախսելով $31\frac{1}{2}$, մ. բաղդադի և 111 հատ (66 գ.) 32 մմ մեխր: Այսպիսով, մի որում սվաղքաշը պետք ե խփի $18\frac{1}{2}$ քմ մակերեսույթից վոչ պակաս:

Բանվորի աշխատանքի արտադրումը կախված ե խփվածքի մեջ պահպանվող խտությունից: Բաղդադիքի յեղբերի միջև 3 և 3 սմ վանդակներ անելիս սվաղքաշը մի որում կխփի մոտ 13 քմ, իսկ 7 և 7 սմ վանդակներ անելիս՝ 23 ք. մետրից ավելի: Դրան համապատասխան—մախ կծախսի 155 հատ և 55 հատ:

Առաստաղի խփվածք կատարելիս բանվորի աշխատանքի արտադրումը պակասում ե և ա. դեպքի համար կլինի $15\frac{1}{2}$ քմ ք. դեպքի համար—11 քմ և յերրորդ դեպքի համար— $19\frac{1}{2}$ ք. մ. Դրան համապատասխան՝ մեխեր կծախսվեն 122 հատ (739), 171 հատ (101 գ.) և 95 հատ (56 գ.):

ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՄԵԽԵՐ ԽՓԵԼՈՎ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՎՐԱ ԼԱՐԵՐ ՓԱԹԱԹԵԼՈՎ

Ցերը անհրաժեշտ ե լինում հաստ սվաղ քաշել, պետք ե միջոցներ ձեռք առնել, վարպեսզի շաղախը եկոնոմիայով բանեցնենք, և շաղախը մակերեսույթից ցած չթափիլի:

Այս նպատակով, սվաղի շերտի համար պետք ե ստեղծել հուսալի հենարան և հնար յեղածին չափ պետք ե թեթևացնել սվաղի ծանրությունը:

Այս նպատակով մակերեսույթի մեջ խփում են մեծ մեխեր և նրանց պատում են մետաղալարով: Մակերեսույթի և մետաղալարի միջև գտնվող տարածությունը յերբեմն լցնում են վորես թեթև մատերիալով, որինակ՝ շլաքով, փայտի ածխով և այլն:

Նայած թե ապագա ծեփվածքն ինչ հաստատություն պիտի ունենա, մակերեսույթին խփում են տարբեր յերկարության մեխեր, այնպես, վոր մեխր յերկարության միայն կեսն և դնում մակերեսույթի մեջ:

3—4 սմ հաստության ծեփվածքի դեպքում վերցնում են 50—75 մմ յերկարության մեխեր, իսկ 6—8 հաստության դեպքում 100—150 մմ յերկարության մեխեր:

Մեխերը խփվում են շախմատի կարգով, մոտավորապես իրարից 10—20 սմ հեռավորության վրա:

Փալտե մակերեսույթների դեպքում մեխերի խփելը զժվարություն չի ներկալացնում:

Կրի շաղախով շինած պատերում մեխերը խփում են շարք վածքի կարերի մեջ: Այս դեպքում մեխերի մի մասը ծովում, կամ կոտրվում ե:

Ցեմենտի շաղախով շարվածքի դեպքում հարկավոր ե լինում շարվածքի մեջ շլյամբուրով (ծակիչով) փորել փոսեր, սրանց մեջ դնել փալտի կտորներ ու մեխերը խփել այդ փալտերի մեջ:

Մակերեսույթին խփած մեխերը պատում են յերկաթալարով: Բանվորը յերկաթալարի ծայրն ամրացնում և ծալքի մեխերից

Ապա հետզհետե լաց անելով լարի կծիկը, նրանով ամեն մեխի գլխի շուրջը մի փաթ և տալիս Փաթ տալիս լարը պետք է լավ ձգել, վորպեսզի նա չկարողանա սահել մեխերի վրալով

Յեվ ալդպես, տատիճանաբար պատռմ են բոլոր մեխերը:


Նկ. 13. Շլյամբուր (Ճակիչ)

Նախ ենք անում, լարապատռմը կարող ելինել միակի կամ կըրկնակի: Առաջին գեպքում՝ լարը մեխերի վրա հատվում է 1 անգամ (Նկ. 14), Յերկրորդ գեպքում՝ ամեն մեխի վրա տեղի է ունենում 2 հատում, ինչպես այդ ցույց եւ տված 15-րդ նկարում:

Գործնականում չի պահանջվում իրականացնել մեխերի և լարի ճիշտ այդպիսի դասավորում: Սակայն, սվաղքաշը պիտք է ձգտի մեխերը խփել և լարով պատել, վորքան կարելի է, համաշափ:

3—4 մմ. հաստուց

Բլան ծեփվածքի գեպքում բավական կլինի միայն լարապատռել մեխերը: Շաղախն իր մեջ առնելով մեխերն ու լարը՝ ամուր պահպամ են նրանց վրա: Յերբեմն ել, շաղախը տրնաենալու նպատակով, նրա մեջ սեղմելով մտցնում ե խճի կտորներ:




Նկ. 14. Մեխերի միակի պատռմը յերկաթաւլարով.

Ավելի հաստ ծեփվածքների դեպքում, վոչ միայն շաղախի տնտեսելու համար, այլև ապագա ծեփվածքի ծանրությունը փոքրացնելու նպատակով արգեն հյուսած լարի հետեւ ածում ենթեթև մատերիալի, օրինակ՝ շլակի, փալտե տծխի, կոկսի կտորներ: Այդ լցնող մատերիալի կտորները պետք ե խիտ նստեն հյուսվածքի հետևում: Առանձին կտորները հյուսվածքի տակից 5 մմ. ից ավելի չպետք ե դուրս ցցվեն: Հակառակ դեպքում՝ նրանք սվաղ անելիս կխանգարեն:

Լցվածքը խտացնելու նպատակով առանձին կտորներ են մետռմ լարի արանքներով և խտացնում են մուրճի թեթև հար-

վածներով: Յեթե ցանցը շատ խիտ է, մատերիալը մաս-մաս են ցցնում—վորքան տեղ վոր մեխերը պատռմ են ւարով:



Նկ. 15. Մեխերի կրկնակի պատռմը լարով.

ՄԵՏԱՂԵ ՑԱՆՑ ՔՎՃԵԿԸ

Ծարվածքի յերեսին յեղած ակռոներն ու կանալները ծածկելու համար, ակռոների վրա մետաղե ցանց են քաշում և հետագայում սվաղ են քաշում նրա վրա: Նույնպիսի ցանց են քաշում խնամքու աշխատանքների ժամանակ այն տեղերում, ուր փայտե միջնորմները կաչում են քարե պատերին կամ առաստաղին, վորպեսզի այդ տեղերում ճաքեր չառաջանան:

Բացի դրանից, ցանցը կիրառվում է նաև հետելալ գեպքերում:

1) սվաղի և սվաղվող մակերեսույթի միջև սի ողային շերտ գոյացնելու համար.

2) վորպեսզի մկներն ու առնետները չկարողանան մոնաք դործել շենքերը.

3) վորպեսզի ստանան հիմք՝ ալեբաստրի միջնորմներ կառուցելու համար (Խաղբիցի սիստեմն է՝ լարացանցի կիրառումով),

Աշխատանքը տանում են այսպես. նախ՝ հետ են տալիս ցանցի փաթեթը¹⁾ և լարահատով (կուսակի) կարում են հարկա-

¹⁾ Բուլոն.

վոր չափսի մի կտոր: Վորպեսզի դրանից հետո ցանցի փաթեթը չխճճվի, լարի կտրած ծայրերը ծռում են:

Ցանցի կտրած հատվածը դնում են մակերևութիւն հարկավոր տեղում և նրա մի չեղբար ամրացնում են մեխերով կամ ճարմանդիկներով (ՏԿՕՅՉՔԻ), Դրանից հետո ցանցը ձգում են և ամրացնում են դիմացի լեզրը, ապա մեխեր են խփում նաև միջանկար կետերում:

Ողային շերտ գոյացնելու համար ցանցի տակ ամեն մի 25—30 սմ-ից հետո, խփում են փայտի չորսվակներ (ԵՐԱԿԻ), Յերբ պետք ե լինում իրար հետ սիացնել ցանցի 2 կտոր, նրանց կարում են այլ ված լարով:

ՀԱՅՑԵՐ

1. Ի՞նչ նպատակով ե կտառվալում սվաղվող մակերևույթի սախալատրաստումը.

2. Նախապատրաստման լինչ յեղանակներ կամ՝ աղյուսի, քարի և բետոնի մակերևույթները սվաղելու համար.

3. Դատարկ-կտրաններով չարփածքը սվաղելու համար կարեք կամ մակերևույթի նախապատրաստելու:

4. Ի՞նչպես են նախապատրաստում փայտե մակերևույթները սվաղելու համար.

5. Մանրամասն պատմեցեք, ինչպես ե կատարվում բաղդադիքի խփելը:

6. Ի՞նչ կանոններ պետք ե պահպանել մեխերը բաղդադիքի մեջ խփելու ժամանակ և ինչո՞ւ:

7. Մեկուսացնող մատերիալը կարելի՞ յի խփել յեզրի վրա դրած.

8. Սվաղքարը մ' որում վո՞րքան մեկուսացնող մատերիալ և վո՞րքանդադիքը կարող ե խփել.

9. Վո՞ր զելքուում ե հարկավոր լինում խփած մեխերի վրայերկաթարի հյուսվածքը պատրաստելու:

ԳԼՈՒԽ

ՍԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՆԱՅԱԾ ՊԱՀԱՆՁՎՈՂ.

ԽՆԱՄՔՈՒԹՅԱՆ

Նայած թե մինչե վոր աստիճան խնամքուտ սվաղ և պահանջվում և թե յերեսի շերտի մակերևույթը մինչե ինչ աստիճան պետք ե կանոնավոր լինի, տարբերում են սվաղի լերեք յեղանակ՝

ա) Թորքով,

բ) Քանոնով,


գ) Փարոսներով.

Սվաղի ամենահասարակ տեսակը, վոր կիրառվում է վոչ կարեու չենքերը կարգի գցելիս, կոչվում է բորբով սվաղում. ալուպես և կոչվել այն պատճառով, վոր սվաղվող մակերևույթը հարթացնում են թորքով, վորը տախտակի ուղղանկուն ձեի մի վահան. 40×50 սմ. չափսերի, և մեջտեղում ունի մի կոթ (նկ. 16): Այդպիսի վահանը սովորաբար գործ և ածվում սվաղ կրելու համար:

Սվաղի ալս տիպի նպատակն ե մակերևույթները հարթեցնել և նրանց պահպանել մըթնոլորտային աղղեցութիւններից: Նա կիրառվում է՝ նկուղները, չերդակները, բրանդմառերները¹⁾, խորթանցները և նման տեղերը սվաղելու համար:

Քաշգող սվաղի շերտը, տվյալ գեպքում, պետք ե վորքան կարելի յե քարակի լինի: Սակայն, վորպեսզի սվաղի արանքից բաղդադիքը չերկան և վորպեսզի սվաղը չճարդարակի, նրան տալիս են 11—15 մմ հաստություն:

Ավելի խնամքու հարթացունը կատարվում է 70—80 սմ. յերկարության կիսահարթիչներով: Կիսահարթիչը 10—15 սմ լայնության և 70—150 սմ յերկարության մի տախտակ և, մեկ կամ 2 կոթով (նկ. 17):



Նկ. 17. Կիսահարթիչներ.

¹⁾ Մեծ աների լայնքին կամ 2 չենքերի մըջե շինում են քարե կամ դյուսե խոռլ պատեր, առանց բացվածքների. այդ պատերը շարում-բարձրացնում են կառուրեց ել վեր, մօրպեսզի հրդեհի գեպքում կրակը շենքի մի մասից չանցնի մյուսը, այդպիսի պատերը կոչվում են բրանդմառեր:

Արտաքին անկյունները (զեհերը) և ներքին անկյունները միշտ հարթեցվում են կիսահարթիչով, և ավելի խնամքով, քան մնացած մակերեւույթը:


Թորքով արած, սվաղի մակերեւույթի կանոնավորությունը ստուգում են աչքի չափով: Յեթե աչքներս դնենք մակերեւույթին ու նայենք պատի յերկարությամբ, աչքին չպետք է նկատելի լինեն մեծ ուռուցներ, կամ փոս մնացած տեղեր:

Թորքով կատարվող սվաղն ամենից քիչ բանում և մատերիալ և պահանջում: Նա սվաղի բոլոր տեսակներից ամենաեժան է:

ՍՎԱՂՈՒՄ ՔԱՆՈՆՈՎ

Քանոնով կատարվող սվաղը, համեմատաբար, սվաղի ավելի խնամքու տեսակն է, քան թորքով սվաղումը: Նա գրեթե միշտ կիրավում և սովորական շենքերը թե ներքուստ և թե արտաքուստ կարգի բերելու ժամանակ: Այդպիսի սվաղն ուղղում և բոլոր անհարթությունները և մակերեւույթին տալիս ե կոկ ու մաքուր տեսք:

Մակերեւույթի սկզբնական հարթացումը կատարվում է յեր-



Եկ. 18. Քանոններ

Կար կիսահարթիչով, իսկ վերջնականապես ուղղելու համար գործ են ածում քանոնն (նկ. 18 Ճ), այսինքն՝ փալտե մի յերկար կավար (բերկա), Յերեխն սրա մի կողին խփած ե լինում ծածկի թիթեղ («կտուրի ժեշտ»), վորը հեշտացնում է ավելորդ շաղախի կտըելը (քերելը). Բացի դրանից, այդ թիթեղը քանոնը պահպանում է ծովելուց:

Յերկար քանոնների (մինչեւ 2 մետր) քաշը թիթեցնելու

համար նրանց ծայրերը կտրում են թեք կերպով, ինչպիս ցույց ե տված նկարում (նկ. 18 Ճ):

Մակերեւույթի կանոնավորությունն ստուգելու համար քանոնը դնում են մակերեւույթին տարբեր ուղղություններով: Յեթի քանոննի ծայրերը առնում են ստուգվող մակերեսին, իսկ մեջ տեղում քանոննի տակ լույս ե յերկում, կնշանակի այդ տեղը փոս ե, և անհամատելի ե այդ տեղը լցնել շաղախով: Յեթե, ըստնակառակն, քանոննի մեջանեղն ե կիպ կազում մակերեւույթին, իսկ քանոննի ծալրերը չեն առնում պատին, նշանակում ե ուռուցք (կորնթաղություն) կա: Այդպիսի ուռուցքն անհրաժեշտ ե հաներ:

Վորքան յերկար լինի քանոնը, այնքան դժվար կլինի հաջողեցնել, վոր մակերեւույթին դնելիս տակից լույս չերեա:

Ընդունման ժամանակ աշխատանքի կանոնավորության միաւսակ վորոշումն ասհմանելու համար «Արտադրական Շինարարական նորմաների Ժողովածուի» (նոր կոպարային կանոնագրության) մեջ ստուգող քանոնի յերկարությունն ընդունված ե 170 սմ:

Վորոշինետն քանոնով ստուգելիս շատ դժվար ե մակերեւույթն այնպես ուղղել, վոր քանոնի տակից ամեներն լույս չերեա, նույն ժողովածուն թույլ ե տալիս, վոր սվաղի մակերեւույթն ամեն տեղ չհամընկնի քանոնի կողի հետ, բայց այդ տարբերությունը 3 մմ-ից ավելի չպետք ե լինի՝ քանոնի ամբողջ յերկարության ընթացքում:

Յեթե ընդունման ժամանակ թույլատրված այս նորմաներից ավելի անհաջություններ լինեն, այդպիսի աշխատանքը չի կարող ընդունվել վորքան սվաղած աշխատանք:

ՍՎԱՂՈՒՄԸ ՓԱՐՈՍՆԵՐՈՎ

Յերբ պահանջվում ե շատ մաքուր և խնամքու աշխատանք և մակերեւույթի լավ հարթեցումն, կիրառում են փարոսներով կատարվող սվաղում:

Այս սվաղը կոչվում ե նաև ուղղորդով¹⁾ սվաղ: Այս անունը առաջացել ե նրանից, վոր աշխատանքի այս ձևում սվաղի մակերեւույթը վոչ միայն պետք ե, առհասարակ, հարթ լինի, այլև պատերի վրա նա պիտի արվի, խստորեն, ուղղորդով (ուղղահայց), իսկ առաստաղներում պիտի արվի հարթացույցով (հորիզոնական):

¹⁾ Օտաք, շողուր.

Շաղախի այս շերտերը, վրոնք քսված են սվաղվող մակերևութի վրա և վորոնց լերեսներն ստուգված են, կոչվում են փարոսներ: Ուղղորդով կատարվող աշխատանքի դեպքում փարոսների մակերեսը պետք է խստորեն ստուգված լինի ուղղորդով և հարթացուցով: Միևնույն սվաղվող մակերևույթի վրա գտնվող փարոսների մակերեսները պետք են գտնվեն մի հարթության մեջ:

Փարոսներով կատարվող սվաղի միջին նորմալ հաստությունն են մոտ 20 մմ: Բայց բոլոր պատերը միշտ ուղղաձիգ չեն լինում, իսկ առաստաղները միշտ հորիզոնական չեն լինում: բացի դրանից, նրանց վրա լինում են առանձին-առանձին անհարթություններ: Փարոսներով կատարվող սվաղի դերը նրանումն են, վոր ուղղի այդ բոլոր անհարթությունները և մակերեսույթը հասցնի ուղղաձիգ կամ հորիզոնական զրության: Ուստի ամենաշատ գուրս պրծած մասերում սվաղը կունենա ամենափոքր հաստությունը՝ մոտ 12—15 մմ: Մնացած տեղերում, նայած մակերևույթի անհարթություններին, սվաղի հաստությունը քիչ ավելի կլինի:

Այն դեպում, լերը ծեփերի հաստությունը նորմալ հաստությունից ավելի լին, պետք են մակերեսույթին խփել մեխեր, նրանց պատել լարով և ալին, վորի մասին վերը խոսեցինք:

Սվաղի աշխատանքների հարմարության համար փարոսները շինվում են մեկը մըուսից 1—1 $\frac{1}{2}$ մ հեռավորության վրա: Նրանց յերեսի մակերեսույթը պետք է ունենա 4—6 սմ լայնություն: Փարոսի ամենափոքր հաստությունը համապատասխանում է մակերեսույթի ամենաշատ դուրս պրծած մասին, և արգում է 12—15 մմ: Փարոսի մնացած տարածության հաստությունը փոխվում է նայած մակերեսույթի անհարթություններին:

Պատի ստուգումը.—Այժմ տեսնենք թե ինչպես են ստուգում պատը և ինչպես են դասավորում նրա վրա փարոսները:

19-րդ նկարի ուղղանկյունը մի պատի յերեսն է պատկերացնում: Ցածի գիծը ցուց է տալիս պատի և հատակի ստհմանը: Յերկու կողմանին գծերը ցուց են տալիս պատի կողմանին ստհմանները և իրենցից ներկայացնում են ներսի անկունները, վորոնք ստացվում են 2 հարեան պատերի հատումից:


Աշխատանքն սկսում են նրանից, վոր պատի վերնի մասում, առաստաղից և անկյուններից մոտ 20 սմ ցած, խփում են

1 և 2 մեխերը (նկ. 19), Մեխերը մինչև վերջը չեն խփում, այլ 2—3 սմ թողնում են դուրս: Մեխերի այդ չխփած մասը համապատասխանում է ապագա սվաղի հաստության: Այդ մեխերի

• 1	• 3	2 •
• 5	• 9	7 •
• 4	• 8	6

նկ. 19. Փարոսների դասավորումը մակերեսույթի վրա.

գլխարկների վրայով ձգում են լարը և մոտավորապես նրա միջնակետում խփում են № 3 մեխը, այնպես, վոր սրա գլխարկը գիպչի լարին: Հետո № 1 մեխի գլխարկի մոտից կախ են անում ուղղորդը (նկ. 20). Ավելի հարմար են լինում, յերբ ուղղորդի թեւը փաթաթած և լինում կոթ ունեցող մի կոճի վրա (նկ. 21): պատի ցածի մասում, ուղղորդի ծանրոցի մոտ խփում են 4 մեխը,



իսկ թելի միջնակետի մոտ՝ 5 մեխը, կրկին այնպես, վոր նրանց գլխարկները միայն կաչեն ուղղորդի թելին, նույնը կատարելով 2 և 3 մեխերի մոտից, իր վում են 6, 7 և 8, 9 մեխերը:


Այս բոլոր մեխերի գլխարկ-

ները պետք է գտնվին մեկ հարուցորդում մեջ: Այդ ստուգելու հա-

մար պետք է թելը ձգել 5—7 և նկ. 21. Կոճ ուղղորդու 4—6 մեխերի գլխարկների վրայով, կարելի լինակ 1—6 և 2—4 մեխերի գլխարկների վրայով: Յեթե պարզվի, վոր 8 և 9 մեխերի գլխարկները թելից ցածը կամ բարձր են, կնշանակի մեխերը կանոնավոր չեն խփած:

Այդժամ աշխատանքը պետք է ստուգել բոլորովին սկզբից և անկանոն խփած մեխերը նորից խփել:

Կարողե պատահել վոր 2 մեխերի գլխարկների միջև ձգած թելը գիպչի պատի վրան մասին: Նույնը կարող է պատահել



ողորդի ծանրոցը ցած թողած ժամանակի Այս կնշանակի, 1) վոր պատճեն ունի դուրս պրծած մասեր—մի լեռութիւն, վոր հաճախ և պատահում քարե շարվածքներում, 2) վոր վերելի մեխերի մոտ սվաղի հաստությունը շատ բարակ ենք պատկերացրել մեզ, այսինքն՝ մեխերը շատ խորն ենք խփեր.

Կարող եւ պատահել և հակառակ լեռութիւն, այսինքն՝ վոր բոլոր մեխերի գլխները պատի մակերեւութիւն շատ հեռու մնացած ինեն և պատի ու ձգած շնուրի միջև յեղած տարածությունը ատ մեծ լինի: Այս կնշանակի, վոր վերեւում խփած մեխերի մոտ սվաղի հաստությունը չափից դուրս մեծ ենք պատկերացրել մեզ:

Այսպիսի դեպքերում վերելի մեխերը կամ պետք եւ քիչ խըփենք ներս, յեթե սվաղի շերտը հաստ եւ տարացվում, կամ քիչ պետք եւ դուրս քաշենք, յեթե սվաղի շերտը շատ բարակ եւ տարացվում: Յերբ 1—2—3 մեխերը վերջնականապես դնում ենք ինչպես պետքն եւ, ապա նրանց համաձայն կարգավորում ենք և մյուս մեխերը, պահպանելով վերը նշած բոլոր կանոնները:

Փարուների տեղադրումը պատերի վրա.—Յերբ ապագա սվաղի մակերեւութիւն հիմնական կետերը (այսինքն՝ մեխերի գլուխները) տեղադրված են ինչպես պետք եւ, սկսում են փարուները տեղադրել:

Դրա համար թելը նորից ձգում են վերելի 1—2 մեխերի գլխարկների վրայով: Թելի գծով խփում են մեխեր՝ իրարից 1— $1\frac{1}{2}$ մետր հեռու, ալնպես, վոր նրանց գլուխները դիպչեն ձգած թելին: Ապա ամեն մի վերի մեխելից ցած են թողնում ծանրոցը: Մանրոցի թելի յերկարությամբ մեխեր են խփում իրարից $1\frac{1}{2}$ — $1\frac{1}{4}$ մ հեռու, դարձյալ ալնպես, վոր նրանց գլուխները կանոննեն թելին հավասար:


Պատը նշանաձողելու ժամանակ պետք եւ հետեւ, վոր ծանրոցը կախ ընկնի բոլորովին ազատ, թույլատրելի չե, վոր ծանրոցը պառկի պատին: Յեթե դա անխուսափելի լին, այդ դեպքում պատի մեջ ընարում են ծանրոցի համար մի փոքրիկ բռն, այնպես վոր ծանրոցն ազատ կախ ընկնի:

Յեթե պատի վրա կան դուրս պրծած մասեր, որինակ՝ գոտիկ և այլն, այդպիսի տեղերի վրայից ծանրոցը պետք եւ անցկացնել: Դրա համար պատի մեջ խփում են փայտե լերկար բեզեռներ (կօտուլք) և ծանրոցը խփում են նրանց վրայից: Ապա բնեոներից մեջի մոտ վորոշում են ապագա սվաղի մակերեւութը


և ճշտությամբ չափում են հեռավորությունն այդ մակերեւութից մինչև ըսեսի գլուխը: Հարժարության համար շինում են համապատասխան լերկարության ճարմանդ և ամեն մի ըսեսի մոտ խփում են մի մեխ: Այս մեխերի գլխարկների գրությունը փորաշում են չափելով տարածությունը ըսեսի գլխից մինչև մեխի գլուխը:

Յերբ բոլոր մեխերը խփում վերջացնում են, նույնականացնեած, այսինքն՝ ամեն մի մեխը պատում են շաղախով, այնպես, վոր մեխի գլխարկն ու շաղախը մի մակերեւությունը կաղմեն:

Ազդպիսի սվաղումը կատարվում է նրա համար, վորպեսզի մեխը ամուր կանգնի իր տեղում և վորպեսզի հնարակա աշխատանքի ժամանակ հնարավոր լինի պատահմամբ նրան տեղից շարժել:



Նկ. 22. Քանոնի դրվածքը՝ պատի վրա փարուները շնուրում:



Նկ. 23. Քանոնի ամրացնելը՝ փարուն շնուրում:

և չպրտում ամրացրած քանոնի տակը: Ավելորդ մատերիալը հավաքում են քանոնի 2 կողմերից:


Յերբ շաղախը պնդում է, բնեռամեխերը դուրս են քաշում, այլ ձեռքի բռունցքով թեթեակի խփում են քանոնին և ձախ ձեռքով զգուշությամբ հանում:

Ստացվում ե պնդացած շաղախի մի շերտ, վոր և ծառացում և վորպես պատրաստի փարոս:

Կանոնավոր պատրաստած փարոսի մակերեսութը պետք է ստացվի ուղղաձիգ: Շեղումն ուղղորդից թուլատրվում ե վոչ ավելի, քան 2 մմ—փարոսի ամբողջ լերկարության ընթացքում:


Նախ քան հետեւյալ փարոսն սկսելը, հանած քանոնը կտմ չորսվակը պետք ե մաքրել նրան կպած շաղախից: Առանց այդ նախագուշական միջոցի, նոր շինվող փարոսը կարող է փշանալ:

Առաստաղներին փարոսներ տինելը: Բոլորովին նույն յեղանակով են շինվում փարոսները նաև առաստաղներին: Միայն թե



Նկ. 24. Վատերպաս (հարթացուց):

այստեղ ծանրոցի փոխարեն գործ են ածում կանոնավոր տաշած մի կավար (բեյկա) և վատերպաս (նկ. 24): Վատերպասը մի գործիք ե, վոր հնարավորություն և տալիս մեզ վորոշել ուղղաձիգ կամ հորիզոնական մակերեսութիւնը: Նա



Նկ. 25. Փարոսը շինելու ժամանակ քանոնի դնելը առօստազին:

Կաղմված և փալտե մի չորսվակից, վորի մեջ հազցրած և քիչ կորացրած ապակե խողովակ: Այս խողովակը գրեթե ամբողջովին լցրած և հեղուկով (սովորաբար՝ լիթերով) և փակած ե: Ներսում

գտնվող ողի բշտիկը հեշտությամբ շարժվում է խռովակի լերկարությամբ: Վատերպասի հորիզոնական դիրքի դեպքում բշտիկը կանգ է առնում խողովակի մեջտեղում:

Առաստաղին փարոսներ շինելիս ա կավարը դնում են առաջին 2 մեխերի գլխներին և 6 վատերպասը սեղմում են նրա ստորին կողին (նկ. 25): Բաշտիկի դիրքի համեմատ վորոշում են, թե վոր մեխը պետք ե ավելի խփել առաստաղի մեջ: Յեթե բշտիկը կանգնի խողովակի մեջտեղում, կնշանակի մեխերի գլխները հորիզոնական հարթության մեջ են: Բոլոր հետեւյալ մեխերն այնքան են խփվում, վոր նրանց գլխարկներն առնեն կավարի վերին կողին:

Փարոսներ տինելու համար գործածիք տաղախից: Նրա առավելությունը կայանում է նրանում, վոր այդպիսի շաղախը շուտ և հովանում, ուստի աշխատանքի մեջ կանգառումներ չեն ստացվում: Սակայն նա ունի այն անհարմարությունը, վոր փարոսներն ոգտագործելուց հետո անհրաժեշտ ե նրանց պոկել իրենց տեղերից և սվաղել ընդհանուր սվաղով, վորով սվաղվում ե մակերեսութը: Յեթե ալերաստը ե փարոսը տեղից չպոկենք, նրա երկարությամբ ճաքեր կառաջանան, վորովհետեւ ալերաստը վատ և կապվում մլուս շաղախների հետ:

Յեթե փարոսները շինված են նույն շաղախից, ինչից վոր սվաղն ե, կարիք չկա նրանց պոկելու: Այս դեպքում սվաղը ծեփելուց առաջ պետք ե փարոսի կողմանային մակերեսութները լավ կտկտել և թրցել: Սրա շնորհիվ ավելի լավ կապակցություն և ստացվում շաղախի և փարոսների միջև:

Փարոսները պատրաստելուց հետո սվաղն են անում, վորը հարթեցնում և ստուգում են՝ քանոնը քաշելով 2 հարեան փարոսների վրայով:

Այդպիսի սվաղի մակերեսութը պետք է համընկնի փարոսների մակերեսութիւնը հետո: Այս մակերեսութիւնը վոչ մի շեղում այս կամ այն կողմը չի թուլատրվում:

Ինչպես այժմ տեսնում ենք, փարոսներով և ուղղորդով կատարվող սվաղը պահանջում է լերկար հախապատրաստական աշխատանք: Փարոսները կանոնավոր դասավորելուց և շինելուց ե կախված ապագա սվաղի կանոնավորությունը:

Իսկ յերբ փարոսներն արդեն պատրաստ են, սվաղն ավելի հեշտ և կատարվում, քան քանոնով սվաղը: Քանոնով սվաղելիս

Հանհավոր մակերևութ ստանալու համար անհրաժեշտ է ունինալ ամուր և վարժ ձեռք: Իսկ փարուների ցեղը ունի գոյություն ունեն ուղղություն ուղղություն մակերևույթներ (փարուները). և սվաղքաշը միայն պետք է հետեւ, վոր մակերևույթն ուղղելիս քանոնն ամբողջ ժամանակ կաչի փարուներին:

Բայց և այնպիս ուղղորդով կատարվող սվաղը համարվում է ամենաթանկը, վրույնիտես փարուներ շինելու ծախսերից բացի՝ նա շաղախի մեծ ծախս և պահանջում մակերևույթի բոլոր անհարթություններն ուղղելու համար, մինչև վոր մակերևույթը կստանա ուղղաձիր կամ հորիզոնական դրություն:

Թանկարժեք լինելով, ուղղորդով կատարվող սվաղը կիրառվում և այնտեղ, ուր պահանջվում է շատ մաքուր և խնամքուաշխատանք, Ամենից հաճախ նա կիրառվում է կառավարական և հասարակական նշանավոր շենքերը կարգավորելու դեպքերում:

Երբեմն այնպիսի աշխատանքներում, ուր մեծ խնամքուություն չի պահանջվում, փարուները շինում են վոչ թե ուղղորդով կամ վատերպատով, այլ միայն ձգած թելի ողնությամբ: Ուշադրություն են դարձնում միայն նրա վրա, վոր թելը վոչ միտեղ չկաչի պատին, և վոր սվաղի շերտի հաստությունը բավարար լինի (մոտ 15—18 մ): Այս գեպքում ուղղաձգության կամ հորիզոնականության հետեւից չեն ընկնում. պատերը կարող են ունենալ վորոշ անհարթություններ, իսկ առաստաղները կարող են լինել վոչ բոլորովին հորիզոնական:

Այդպիսի աշխատանքը կոչվում և «լարով» կամ «թելով» աշխատանք: Նա կիրառվում է բանութիւն և մատերիալի տնտեսման նպատակով:

ՀԱՐՑՔ

1. Սվաղ կատարելու յեղանակը կախում ունի աշխատանքի համար պահանջվող ինամքուությունից:
2. Վորոնք են թոքով կատարվող սվաղի բնորոշ հատկությունները:
3. Ի՞նչ տարբերություն կա քանոնով կատարվող և փարուներով կատարվող սվաղների միջև:
4. Ի՞նչպիսի յերկարության քանոնով են ստուգում սվաղած մակերևույթի կանոնավորությունը և ինչպիսի շեղումներ են թույլատրվում:
5. Ի՞նչպես են նշանաձողում պատը:
6. Ի՞նչ յեղանակով են ստուգում առաստաղի հորիզոնականությունը:
7. Ի՞նչպես են առաստաղին փարուներ շինում, յերբ նրանց տեղերն արդեն պատրաստեն:
8. Սվաղի ծեփածքի մեջ ալերասարե փարոս թողնել կարելի յեւ:

ԳԼՈՒԽ VI.

ՍՎԱՂԻ ՔԱՇԵԼԸ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻՆ

Նաղախ համեր կարգը.—Ամեն մի սվաղ հիմնականում կաղմվում է մակերեւոյթին քաշվող տարբեր թանձրության, լերըն տարբեր բաղադրության շաղախի միքանի շերտերից:

Այդ շերտերը կոչվում են սվաղի ցող, ծեփ և ծածկույթ: Այս վերջին շերտը յենթարկվում է այս կամ այն մշակման:

Սվաղիու այս կարգը պահպանվում է անշախ աշխատանքի համար պահանջվող ինամքուությունից (թոքքնվ, քանոննվ թիմ փարուներով և կատարվում):

Սվաղվող մակերեւոյթի մատերիալը (փայտը, աղբուսը, քարը և այլն), նույնպիս և շաղախի տեսակը (կրային, ցեմենտի, խառն) այս կարգը չեն փոխում:

Գործիների ծողովածու.—Սվաղքաշը սվաղի գործն սկսելիս, պետք է ունենա գործիքների և հարմարութների հետեւալ ժողովածուն, վորոնցից գոքը երը նա, ըստ հնարավորության, պահում ետպահակի մեջ:

1. Սվաղի արկղ (նկ. 5)

2. Յերկաթե թիակ (նկ. 6)

3. Փալտե թիակ (նկ. 7)

4. Տակառ՝ ջրի պաշարի համար (նկ. 26)


5. Դույլ (նկ. 27) կամ շալիա (նկ. 28)՝ շաղախի մեջ ջուր ածելու կամ մակերեւոյթը սրսկելու նպատակով ջուր բերելու համար:

6. Թորք (նկ. 16)

7. Յերկույիրեք ծեփիչներ (սվաղի մալաներ) տարբեր չափերի (նկ. 29): Այդ ծեփիչները շինուած են լինում մետաղի թիթեղից, ունենում են փայտե կոթ, նրանց չափսերը տատանվում են լայնությունը 10-ից մինչ 15 սմ և լիրկարությունը 15-ից մինչ 25 սմ:

Այդ ծեփիչները զործ են ածվում շաղախի փոքր քանակություններ պատրաստելու և մակերեսութիւն խփելու համար:

8. Փայտե հարթիչը (նկ. 30). Սա շինված է մոտ 12×20 սմ տփսեր ունեցող տախտակից, կոթն ել փայտից եւ հարթիչը ծառալում և սվաղվող տակերեսութը վերջնականապես հարթելու համար:




նկ. 26. Տակառ.

9. Յերկու կիսահարթիչ (նկ. 17), մեկը 70—80 սմ. յերկարության՝ շաղախը կոկացնելու համար, մյուսը 1—1½ մ. յերկարության՝ ներքին ան-



նկ. 27. Բույլ.



նկ. 28. Շայկա.



նկ. 29. Ծեփիչներ



նկ. 30. Հարթիչ.

նկ. 31. Վաղիններ (թացիչներ).

Կլունները և գեհերը հարթելու համար:

10. Վըճին (նկ. 13) (լայնածայր, թացիչ) — մակերեսութը ջրով թացացնելու համար. Հարմար է դործածել տափակ՝ վըճիններ, վորովհետև նրանցով ավելի շուտ կարելի յեթքել մակերեսութը:

11. Քանոն. (նկ. 18)

12. Մաղ (նկ. 3) շաղախի բաղադրիչ մասերը մաղելու և պատրաստի շաղախը մաղի միջով անցկացնելու համար:

ՑՈՂԵԼԸ

Սվաղվող մակերեսութը համապատասխան կիրապով նախապատրաստելուց հետո, մկան են նրան ցողել:

Ցողել — նշանակում է մակերեսութը ծածկել ջրիկ շաղախով, Նրա շնորհիվ սվաղն ավելի լավ ե կաջում սվաղվող մակերեսութիւն. Այդ ջրիկ շաղախը մենք կանվանենք շաղ կամ ցող:

Ինչ պատրաստության պես է տեսնել մինչեվ ցողերը. — Սվաղքաշը, նախ սվաղի արկղում պատրաստում է հիմնական շաղախը կամ ցեմենտի ու ավաղի չոր խառնուրդը, և կուտակում է արկղի վերի մասում:

Քարե, բետոնն և աղյուսե պատերը ցողելուց առաջ նրանց թրջում են ջրով: Դրա համար մի բանվոր դույլով ջուրը բերում է աշխատանքի տեղը և վրձինով կամ քափչայով շաղ ե տալիս մակերեսութիւն: Մակերեսութիւնը թրջելն այն նշանակությունն ունի վոր, նախ մակերեսութիւնը հեռացնում է կեղտն ու փոշին, յերկրորդ՝ վորպեսողի մակերեսութիւնատերիալը ցորի միջից չծծի ջուրն ու նրան չչորացնի. Վերջին հանգամանքը, վոր առանձնապես նկատելի յեւ աղյուսե շարվածքի գեպքում, պակսեցնում է շաղախի մակերեսութիւնը հետ կապվելու ընդունակությունը:

Փայտե մակերեսութիւնները ցողում են առանց նախապես նրանց թրջելու: Պետք չե թրջել նաև աղյուսե, քարե և բետոնն եւ փացած մակերեսութիւնները:

Ցողելու համար հարկավոր թանձրության շաղախն այսպեսն պատրաստում: Պատրաստած հիմնական շաղախի կամ խառնուրդի մի փոքր քանակություն արկղի վերի մասից քաշում են ցածի մասը և նրանից շաղախ են պատրաստում ջրով կամ կրային կաթով, մինչև վոր ստացվում է արաժանի նման հեղուկ խմոր: Այդ գեպքում խառնում են քափչայով: Ցողելու շաղախի համար կարելի յեւ գործածել խոյըր ավագ:

Մակերեսութիւնը ցողելը. — Ցերը ջրիկ շաղախն արդեն պատրաստ է, վարպետը ձախ ձեռքով վերցնում է թորքը, բռնելով նրա կոթից, և թորքի լերկար կողը սեղմում է իր կրծքին: Աջ ձեռքով վերցնում է քափչան, պատրաստած շաղախը նրանով դնում է թորքի վրա ու թորքը հորիզոնական դրությամբ բռնած մուտենում և սվաղվող մակերեսութիւն: Քափչայով վերցնում է թորքից շաղախի մի մասը, ուժով ծեփում է մակերեսութիւնը, վորից շաղախը ծծվում է մակերեսութիւնը բոլոր անհարթությունների մեջ:

Այդ ցողի բարակ, մոտ 3 մմ հաստության շերտով պետք ե պատել ամբողջ մակերևույթը, Փայտե մակերևույթները ցողում են շուտ բռնվող կրատարաստրալին շաղախով, վոր պատրաստում են փոքրիկ բաժիններով:

Այլ մակերևույթները ցողելու համար գործ են ածում կրի, ցեմենտի շաղախ և բարդ շաղախներ:

Այս աշխատանքին ընտելացած սվաղքաշը 1 ժամում կարող է ցողով ծածկել 16—17 քմ պատ կամ առաստաղ, կամ 10 քմ կարող է ցողել 36 րոպեում:

10 քմ պահին կրային, ցեմենտալին կոմ կրացեմենտալին շաղախ կրթա 35 լ (3. գույլ), իսկ կրատէրաստրալին շաղախի դեպքում անհրաժեշտ է ծախսել 16 լ կրալին ; աղախ և 16^{1/2} կգ ալիքաստր: Առատաղի վրա մատերիալ ծախսվում է 50⁰-ով ավելի:

Վերջին ժամանակներս թորքի և քափչայի փոխարեն ցողելու համար սկսել են գործածել սովորական շերեք (նկ. 32). Նրան ալ վերջնում են ջրիկ շաղախը սվաղի արկղից և ուժով շեփում են պատին: Մեկ հաջող և լավ շեփում մով միանգամբց կարելի է հավասար շերտով ցողել^{1/8}—^{1/6} ք մեար մակերեսութիւն:



Նկ. 32. Շերեք.

Բավարար վարժվածության դեպքում աշխատանքը մոտ 2—3 անգամ ավելի արագ է կատարվում, քան թե թորքով աշխատելիս: Յեզ պահպանվում է աշխատանքի լավորակությունը:

ԾԵՓԵԼԸ

Յերբ ցողն արդեն բռնվում է, բայց դեռևս բոլորին չի պնդացել սկսում են մակերևույթին քաշել շաղախի նոր շերտ:

Այս շերտը կոչվում է միջին շերտ կամ ծեփ և ալվում է թանձր շաղախից:

Արտաքրն մակերևույթներ սվաղելիս ծեփի շաղախի համար կարելի յե բանեցնել ավելի խոշոր ավազ, քան ներքին մակերեսույթներ սվաղելու համար: Այս շերտի համար լավ է վերցնել այնպիսի ավազ, վոր կազմված է մանր ու խոշոր հատիկների խառնուրդից:

Աշխատանքի ժամանակ չպետք է թողնել, վոր ցողը բոլո-

րովին պնդանա ու չորանա: Այդպիսի ցողը վատ չկապվի նոր շերտի հետ, և վորոշամանակ անցնելուց հետո սվաղը կակսի պակ դալ ցողից: Իսկ յիթե ցողն արդեն չորացել է, պետք է նրան ցած թափել և մակերևույթը նորից ծածկել թարմ ցողով:

Ծեփի շերտի հաստությունը կախված է աշխատանքի խնամքությունից: Թորքով աշխատելիս նա հավասար է 8—12 մմ իսկ քանոնով և փարուներով աշխատելիս, միջին թվով՝ 14—16 մմ:

Մակերևույթի առանձին տեղերում այս շերտը կարող է լինել զգալիորեն ավելի հաստ, քանի վոր մակերևույթի հարթացում կատարվում է հենց ծեփելու ժամանակի:

Ծեփի համար գործածվող շաղախը պատրաստվում է սվաղի արկղում նույն ձևով, ինչպիս պատրաստվում է ցողի համար, բայց անհամեմատ ավելի թանձր են անում, սակայն արաշաղախն ել շատ թանձր չպետք է լինի, աղա թե վոչ վատ կ'ապչի ցողին: Իսկ շատ ջրիկ շաղախն ել չորանալուց հետո թույլ սվաղ է տալիս: Հարկավոր թանձրության շաղախը պատրաստելու ունակությունը ձեռք է բերգում ընտելացումով:

Հաղախի ծեփելը.—Սվաղաշը քափչայով վերցնելով շաղախի փոքր քանակություն, դնում է թորքի վրա: Ապա թորքից, նույն քափչայով վերցնելով շաղախը, ուժով խփում է մակերեսույթին:

Յերբեմն սվաղ քաղողները շաղախը թորքից անց են. կացնում մակերևույթին անմիջապես: Դրա համար նրանք թորքի վրա գտնվող շաղախը սեղմում են սվաղով: մակերևույթին և միաժամանակ թորքը քաշում են մակերևույթի յերկարությունը: Զենք կարող խորհուրդ տալ աշխատանքի այս ձեզ, վորովհետեւ այս դեպքում չի կարելի յերաշխալորել, վոր ցողի և ծեփի միջև կատացվի բավարար կապ:

Ծեփը, նայած նրա հաստատության, կատարվում է մեկ կամ 2 անգամ, ամեն անգամին 6—8 մմ հաստությամբ: Ամեն մի ծեփվածքը քաշվում է միայն նրանից հետո, յերբ նախորդը վորոշ չափով բռնվել է:

Այս կանոնն առանձնապես կարևոր և ցեմենտի շաղախների նկատմամբ, վորովհետև նրանք ցած թափելու հատկություն ունեն: Սվաղքաշը պետք է աշխատի միանգամից ծածկել բավական մեծ տարածություն, Սա նրան հնարավորություն է տալիս չսպասել, վոր նախորդ ծեփվածքը կակսի բռնվել:

Նեփի մակերեվույլի հարքացաւմը.—Թորքով աշխատելիս քաշած սվաղի շերտը հղկում են կարճ հարթիչով և լեռներն թորքով։ Քանոնով և ուղղորդով կատարվող աշխատանքների դեպքում մակերեւլթը վերջնականացնես հարթացնում են քանոնով։ Քանոնը կիալ սեղմում են թարմ սվաղի մակերեւույթին և տանում են պատի վրայով՝ թեթևակի շարժելով մեկ ձախ մեկ աջ։ Հանդիպող կորնթարդութլուները (գուրս պրծած տեղերը) կտրվում են քանոնի զեհով (կողով), նկատելի լին դառնում նաև փոս մնացած տեղերը, վորոնք իսկույն լցվում են շաղախով։

Քանոնի այդ կերպ քաշելը կատարվում ե միջանի անգամ, մինչև վոր սվաղքաշը համոզվի, թե սվաղի մակերեւույթը կանոնավոր ե։

Քանոնով աշխատելիս սվաղքաշը քանոնը տանում և աչքի չափով, հետեւ միայն, վոր քանոնն իր ամբողջ յերկարությամբ վորքան կարելի կի կազմի մակերեւույթին։ Իսկ ուղղորդով աշխատելիս, քանոնը, դրանից բացի, անպատճառ պետք և հենվի հարքան փարուների վրա։

Մակերեւույթի հարթացումը պետք ե կատարել արագ։ Սա կարևոր և մանավանդ կրա-ալերաստրային շաղախների նկատմամբ, վորոնք կարող են արագ սառչել։ Դրանից հետո այլևս անկարելի կլինի մակերեւույթը հարթել։ Բացի դրանից, յերկարաւուն և ուշացած հարթումը կարող ե խանդարել շաղախի բոնը վելուն, վորից շաղախը կթուլանա և սվաղը ժամանակի ընթացքում կարող ե ճաքճքել և թափիվել։

Թե դրսի անկյունների (զեհերի) և թե ներսի անկյունների հարթումը կատարում են յերկարուկ հարթիչով։ Քանի յերկար հենի հարթիչը, այնքան ավելի կանոնավոր և ստացվում անկուն։

Սվաղքաշողը, նայած շաղախի տեսակին, մի ժամում կարող է թորքով աշխատելիս շաղախով ծեփել 5—5^{1/2} քմ պատ, կամ առաւտաղ (մոտ 2 ժամում 10 քմ)։ Իսկ քանոնով կամ փարունակով աշխատելիս մի ժամում կծածկի 3—3^{1/3} քմ (10 քմ՝ 3—3 ժ. 24 րոպեյում)։

10 քմ. պատ շաղախով ծեփելու համար թորքով աշխատելիս կրի կամ ցեմենտի շաղախ կպահանջմի 129 լ (մոտ 11 դուլ), իսկ կրա-ալերաստրային շաղախի դեպքում կպահանջմի 69 լ (5^{3/4} դուլ)։ Կրի շաղախի և 62^{1/2}, կդ ալերաստր։ Նույնքան մակերեւույթին քանոնով կամ փարուներով աշ-

խատելիս կրի կամ ցեմենտի շաղախ կերթա 172 լ (մոտ 14^{1/2} դուլ), իսկ կրա-ալերաստրային շաղախի դեպքում 92 լ (մոտ 7^{3/4} դուլ)։ Կրի շաղախի և 83^{1/2} կդ ալերաստր։

Առաստաղներին մատերիալ գնում ե 50-ով ավելի։ Շերեփի դրծածութիւն այս դեպքում ել տալիս ե աշխատանքի վորոշ արգացում։

Պետք ե նկատել, վոր ալերաստրի փարուներով սվաղ անելիս ծեփը վերջացնելուց ու հարթելուց հետո փարուները պոկառում և ստացված ակոսները լցնում են շաղախով։ Վերջիններս իրենց հերթին, հարթացվում են այնպես, վոր հավասար լինեն ամբողջ մակերեւույթին։

ԾԱԾԿՈՒՅԹ

Ընդհանուր ցուցմունի. — Ծեփելուց 2—3 ժամ անց, այսինքն լեռը ծեփը մի փոքր բռնվում է և քիչ պնդանում, նրան ծածկում են ևս մի շերտ շաղախով։ Այս շերտը արվում է բարակ—մոտ 2 մմ հաստության և կոչվում է ծածկյուր (յերեսվածք, կոկածք)։

Ծածկութիւն անում են, վորպեսզի ստանան վորքան կարելի լի կոկ մակերեւույթ։ Ուստի սրա շաղախի համար բանեցնում են մանր ավաղ, իսկ շաղախի բաղադրիչ մասերը մաղով մաղում են։ Կամ դրա փոխարեն յերբեմն պատրաստի շաղախն անց են կացնում մաղի միջով։

Ծածկութիւն շաղախը պատրաստվում է նույն կապող նյութերից, ինչ վոր գործ են ածկում ծեփի շաղախի համար։ Բայց այս դեպքում շաղախն ավելի պարարտ են անում, վորի համար հիմնական շաղախին ավելացնում են կրի կաթ կամ ալերաստր։ Ցեմենտի շաղախի դեպքում կարելի լի կիր ավելացնել։

Շաղախն անում են շատ ավելի ջրիկ, քան անում են ծեփի համար, բայց ավելի թանձր, քան ցողի համար։ Ցեխե ծեփը համեմատարար շատ և պնդացել, ծածկութիւն շաղախն ել ավելի ջրիկ են անում, վորպեսզի լավ միանա ծեփին։

Ծածկութիւն բանելը մակերեւույթին։ Ինչպես նախորդ դեպքերում, նույնպես և ծածկութիւն ժամանակ պատրաստած շաղախը դնում են թորքի վրա և նրա վրայից քափշալով շիռում են մակերեւույթին։ Առաստաղները հաճախ ծածկում են անմիջապես թորքից, այսինքն՝ թորքը շաղախի հետ միասին սեղմում են առաստաղին և տանում են առաստաղի յերկարությամբ։

Ծածկած մակերեսույթը հարթում են կիսահարթիչով և ստուգում են քանոնով։ Հարթումը պետք է կատարել արագ, վորպեսզի բռնվելը չխանգարվի, ապա թե վոչ՝ նույնիսկ արտաքին լավ տեսք ունեցած դեպքում ել ձածկույթը վորոշ ժամանակից հետո կակսի պոկ գալու թափփել։ Նույնը կարող է պատահել և թանձր շաղախով արված ձածկույթի հետ։

Մի ժամում սվաղքաշը կրի և կրա-ալեբաստրային շաղախով
կարող և ծածկել 7³₄ քմ պատ, կամ 6¹₂ քմ առաստաղ (10 քմ.
պատ 1 ժամ 18 րոպեյում, իսկ 10 քմ առաստաղ՝ 1 ժամ 34 րո-
պեյում): Ցեմենտի կամ բարդ շաղախի դեղքում նա կծածկի հա-
մագատասխանաբար 6¹₂ քմ և 5¹₂ քմ (10 քմ 1 ժամ 30 րո-
պեյում և 1 ժամ 48 րոպեյում):

Այս աշխատանքի 10 ք մետրին կը բարձրակայի, բարդ շաղախ կամ ցեմենտի շաղախ գնում և 23 լ (2 դոյլ), իսկ կը ալերաստ-բային շաղախի դեպքում՝ 10 լ (1 դոյլից պակաս) և 11¹/₂ կգ ալերաստու Առաստազներին շաղախ գնում և 50⁰/0 ով ավելի:

Սվաղի ծածկութը գրեթե միշտ ել անում են, բայց նասիպողական աշխատանք չե։ Հաճախ, յերբ խնամքու աշխատանք չի պահանջվում, որինակ թորքով յերբեմն նույն իսկ քանոնվ աշխատանք կատարելիս, ծածկութ չեն անում, այլ ծեփնանելուց հետո անմիջապես սկսում են ժակերեւութը հարթել հարթիչով։

LUP8bP

1. Ушархареконујթін սұғашы քашкелінде աշխատանքն ինչ անկախ մասերінде բաժանվуады:
 2. Һенч տарбияларнан қалыптар հարթէжіл և қиынайтында өткізу мүмкін болады.
 3. Һенч նәрсәлардың өткізу мүмкін болады.
 4. Қарлқақшылар և әмбетшілер қызырмаша қызметтің үшіншілікке үшіншілікке қарастырылады.
 5. Һенч өткізу мүмкін болады.
 6. Үәлдеме қарлқақшылардың өткізу мүмкін болады.
 7. Ұғымдастырылған әмбетшілердің աշխабадын өткізу мүмкін болады.
 8. Әмбетшілердің әмбетшілердің өткізу мүмкін болады.
 9. Қарлқақшылардың өткізу мүмкін болады.
 10. Һенч әмбетшілердің өткізу мүмкін болады.

ՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՎԱՐԿՈՂ ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑՆԵՐԻ ՅԵՎ
ԱԲԱՆՁԻՆ ՄԱՍԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Սվաղի կոկումը.—Սվաղվող մակերեսույթը պետք է այնքան կոկվի, վոր նրա վրա մնան միայն ավազից առաջացած աննշան անհարթությունները. Այդ նպատակով մակերեսույթը արորում են փակտե կոր հարթիչով (սկ. 30), վորից և այս ռպերացիան (գործողությունը) կոչվում է սվաղի կոկումն կամ հարթումը և կամ արորումը:

Նախ քան կոկում սկսելը, պիտք և սպասել, վոր սփառը
բավարար չափով պնդի: Բայց չպիտք և թույլ տալ վոր սփառը
վերջնականացնես չորսնա:

Գործնականորեն վորոշելու համար՝ տրոլելու ժամանակը
հասել եթէ վոչ, կատարում են փորձնական տրոլում, Յեթի հար-
թիչը դժվարությամբ ե գնում, կարծես կայում ե սվաղին և վեր-
ջինիս մակերեսույթն ավելի անհարթություններ ե ստանում,
կնշանակի զեռ տբորել չի կարելի: Իսկ յեթի հարթիչը հեշտու-
թյամբ ե գնում մակերեսույթի վրայով և ազատ ել պոկվում ե
նորանիո, ասել են կոկելու ժամանակը հատել եւ

մրասից, ասու ո գուշ-
կոկելուց առաջ մակերեսութը վրձինի ողնությամբ ցողուժ
են ջրով և այնքան առատ, վորքան ավելի է չորացել սվաղը
Յեմենիտի սվաղի դեպքում առատորեն թրջելը նրան առանձին
ամրություն ե տալիս: Այդպիսի սվաղն, ոգտակար ե աշխատան-
քը վերջացնելուց հետո ծածկել թաց խսիրներով և այդպիս թող-
նել 5-7 որ:

Իոկումը կատարում են աղեղային շարժումներով (աղեղաձև), իսկ յերբ մակերեսությն արդեն կոլված է, ապա նույն հարթիչով մակերեսույթը տրորում են՝ հարթիչը շարժելով զեղի աջ ու զեղի ձախ (ձեռքերը պարզած), վորպասզի հարթիչի աղեղաձև շարժ-

ման հետքեր չթնան: Այդ աշխատանքի սկզբում և վերջում հարթիչը պետք է թռոյլ սկզբել, վորպեսզի շաղախը չհավաքվի շարժման վերջերքում: հակառակ դեպքում այս տեղերում կստացվնա կիտվածքներ:

Մի ժամի ընթացքում սկաղքաշը՝ կարող ե կոկել $6\frac{1}{2}$ քմ պատ կամ $5\frac{1}{2}$ քմ առաստաղ, ամսինքն՝ 10 քմ պատ կոկելու համար նրան պետք է 1 ժամ 30 րոպե, իսկ առաստաղի համար — 1 ժամ 48 րոպե:

Բետոնի պատերի կոկումը.—Առանձին ուշադրություն պետք է դարձնել բետոնի մակերևույթները կոկելու վրա, վորը խիստ տարբերվում ե մյուս ավաղների մակերևույթի տրորելուց:

Սովորական սվաղները կոկելիս մակերեսույթը նախապես հարթացրած ե լինում, և նոր շաղախս ել չի գործածվում: Իսկ բետոնի մակերևույթները կոկում են նրանց վրա դնելով շաղախի մի բարակ շերտ $2-5$ մմ հաստության: Շաղախի այս ծածկույթի նպատակն այն է, վոր լցնի ու ծածկի այն ծակոտիները, անհարթություններն ու փուչ տեղերը, վորոնք կարող են գոյանալ խսիրե ծածկոցը վերցնելուց հետո: Դրանից հետո բետոնի մակերևույթը պիտի ստանա այնպիսի կոկ տեսք, վոր հիշեցնի քանոնով կատարվող սվաղի տեսքը:

Նման կոկում կարող ե կատարվել նաև աղյուսի վրա: Վերջին դեպքում մակերեսույթը թրջում են ջրով, ապա թորքից խը փում են վրան շաղախի փոքր քանակությունն, աշխատում են լցնել լիղած փոս տեղերը: Անդա շաղախը հարթացնում են կիսահարթիչով: Ցերը շաղախը քիչ պնդանում է, նրա մակերևույթը վերջնականապես կոկում են կը դր հարթիչով:

Այս աշխատանքն ավելի ժամանակ ե պահանջում, քան սըվաղի սովորական կոկումը: Մի ժամում բանվորը կարող ե կոկել 3 քմ բետոնի պատ, ծածկելով նրան կը կամ կը ալերաստրալին շաղախով, իսկ ցեմենտով կամ բարդ շաղախով ծածկելու դեպքում $-2\frac{3}{4}$ քմ (համապատասխանաբար -10 ք մետրը՝ 3 ժամ 24 րոպեյում և 3 ժամ 42 րոպեյում): իսկ առաստաղ կարող ե ծածկել դրանից ել քիչ $2\frac{1}{2}$ քմ և $2\frac{1}{3}$ քմ (10 քմ 4 ժամ 6 րոպեյում և 4 ժ. 24 րոպեյում):

10 քմ պատ կոկելու վրա կդնա կը ի, ցեմենտի կամ բարդ շաղախ 50 լ (մոտ $4\frac{1}{4}$ դույլ), իսկ կը ալերաստրալին շաղախի դեպքում 26 լ (մոտ $2\frac{1}{4}$ դույլ) շաղախ և $2\frac{1}{4}$ կգ ալերաստը:

ՅԵՄԵՏԻ ՍՎԱՂԻ ՅԵՐԿԱԹԱՑՈՒՄԸ

Վորպեսզի ցեմենտի սվաղը շատ ամուր լինի և ջրի համար քիչ թափանցելի լինի, սվաղը տքորում են պողպատե թիակներով, ծեփիչներով (մալաներով) մինչև վոր ստացվում ե մություն մակերես:


Այդ թիակները կոչվում են անգլիական մալաներ: մի քիչ այլ ձև ունեն, քան սվաղի մալաները, շինված են պողպատից (նկ. 33), նրանց մոտավոր չափերն են՝ լերկարությունը $20-30$ (նկ. 33), նրանց մոտավոր չափերն են՝ լերկարությունը $10-15$ սի: Այս աշխատանքը կոչվում ե սմ, իսկ լայնությունը $10-15$ սի: Այս աշխատանքը մակերեսում և նրանում ե կալանում, վոր արորած և դեռևս բոյերացում և նրանում ե կալանում, վոր արորած և դեռևս լորովին չպնդացած մակերեսույթը թրջում են ջրով, վրան շաղ են տալիս ցեմենտի փոշու մի բարակ շերտ և մակերևույթը նորից պոտում են անգլիական մալանով, թանգորը մալայի կոթը աջ ձեռքով բռնելով, մալան քսում ե մակերևույթի վաղալով մի ուղղությամբ, միաժամանակ ձախ ձեռքի մատնելով:

Այդ պոտումը շարունակվում ե այնքան ժամանակ, մինչև վոր մակերևույթը պնդում ե և զառնում մությունիրագույն:

Մի ժամում կարելի է լերկաթացնել մոտ 3 քմ պատ կամ հատակ կամ մոտ $2\frac{1}{2}$ քմ առաստաղ (10 քմ. 3 ժամ 12 բռպելյում և 3 ժամ 48 բռպելյում): Պատի կամ հատակի 10 ք մետր մակերես կոնա 14 կգ պորտլանդական ցեմենտ, իսկ առաստաղ ներին $-5^{\circ}-6^{\circ}$ ավելի:

ԱՆԿՅՈՒՆԵՐԻ ՎԵՐՁՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Սվաղի կարգավորման ժամանակ պետք է առանձին ուշադրություն դարձնել բեկման գծերի (անկյունների) կանոնավորություն վրա, այն գծերի, վորոնք ստացվում են 2 մակերեսույթը շաղախն վրա, այն գծերի, վորոնք ստացվում են 2 մակերեսույթը շաղախն վրա: Այդ ե պատճառը, վոր այս աշխատանքը ամեն ների հատումից: Այդ ե պատճառը, վոր այս աշխատանքը ամեն ժամանակ ձեռքով չեն կատարում, այլ լերբեն գործ են ածում ալու կամ այն հարմարանքը:



Նկ. 33. Անգլիական մալաներ.

Բի վրայով մի ուղղությամբ, միաժամանակ ձախ ձեռքի մատնելով:


Եռու նա ուժգին սեղմում ե մալան մակերեսույթին:

Այդ պոտումը շարունակվում ե այնքան ժամանակ, մինչև վոր մակերևույթը պնդում ե և զառնում մությունիրագույն:


Վոր մակերևույթը պնդում է և զառնում մությունիրագույն:

Մի ժամում կարելի է լերկաթացնել մոտ 3 քմ պատ կամ հատակ կամ մոտ $2\frac{1}{2}$ քմ առաստաղ (10 քմ. 3 ժամ 12 բռպելյում և 3 ժամ 48 բռպելյում): Պատի կամ հատակի 10 ք մետր մակերես կոնա 14 կգ պորտլանդական ցեմենտ, իսկ առաստաղ ներին $-5^{\circ}-6^{\circ}$ ավելի:

Զեռքով աշխատաելիս ներսի անկյունները (նկ. 34 ա) և արտաքին անկյունները (գեհերը) (նկ. 34 բ) կողում են լիրկարուկ թորքերով։ Առանձնապես՝ ինամքով պիտք է կոկել քանոնով կամ փարուներով կատարած աշխատանք-ները։ Անկյան կողը պետք է ներկայացնի ուղիղ գիծ և պատերի հատման տեղում պետք է լինի բոլորովին ուղղղաձիղ, իսկ պատի և առաստաղի հատման տեղում — հարիվոնաւ (նկ. 34). Անկյուններ՝ աներսի անկյուններ, ճղբարի կան։




Ներսի անկյունները.—Ներսի անկյունները մեծ թորքով կոռ-
կելուց հետո պիտք է կոկել նաև փոքր թորքով և ապա հարթել
կտրիչով: Կորիչը (նկ. 35) իր ձևով հիշեցնութ և անդիմական
մալան, բայց լինում ե փոքր չափսի: Զի կարելի թուլլ տալ ան-
կյունը՝ հարթել վրձինով, վորովհետեւ մաքուր աշխատանք չի
ատացվում:



Նկ. 35. Կարիչ.


Ներսի անկյունը յերբեմն կլորացվում է (նկ. 36). դա կոչվում է կլորացում.—Դրա համար անկյունին շաղախ են խը-
փում և թռոքով նրան կոր ձև են տալիս:

Արտաքին անկյունները. — Արտաքին անկյունների կոկելն արագացնելու և հեշտացնելու համար վարդում են հետեւյալ կերպ. Հատվող մակերևույթներից մեկի, որին ապատի վրա (նկ. 37 ա)




Ակ. 36. Կլորացում

սվաղով կպցնում են քանոնի դեր կատարող մի տախտակ, այնու պես, վոր նրա գուրս մնացած Յ կողը պատից գուրս մնա 15-20 մմ, ալսինքն՝ վոր նա համընկնի 6 պատի վրա քաշվելիք սվաղի մակերևույթին։ Եթե անկուռնը 2 պատերի հատումն է, պետք է վոր Յ տախտակի կողի ուղղաձայնությունն ստուգվի ուղղորդով։ Շաղախը ծեփելով 6 մակերևույթին, սվաղքաշը հարթացնում են ըստ, թորքը սեղ ներկ քանոնի դեր կատարող տախտակի կողին, այսինքն՝ ոգտվում եալդ տախտակից, վորպես փորսից։



Նկ. 37. Ալտարին անհյան սվաղումը՝ քանոնի՝ դեպ կատարող տակտակ
հրապառելով:

Յերբ շաղախը քիչ պնդանում է, քանոնի գեր կատարող տախտակը հսնում էն և տեղափոխութ էն (նկ. 37 Բ) սվազ քաշած ճ մակերեսութիւնի վրա, կրկին այնպես, վոր Յ կողը ա մակերեսութիւն դուրս մնա 15—20 մմ Սրանից հետո նույն ձևերով սվազում են ա մակերեսութիւն Ստացված գեհը հարթում են թորքով և կարենով:



34 38 Տառեկ պիհաց անկյուններ.

Նկ. 38. Տափակ դեհով անկյուն. Նկ. 39. Կլորացը զեծ.


Նի. 39. Կլորացըած զեհ.

ստացվող տափակությունը ծայրեիծալը պետք է ունենա միեւնույն լայնությունը։ Վերջնական կարգավորման ժամանակ այդպիսի գեհը կոկում են կտրիչով։

Կլորացրած զեհ. - Յերբեմն պահանջվում և զեհը դուրս բերել կլոր (նկ. 39): Սրա համար, նախ՝ շինում են սովորական զեհ, և յերբ նա պատրաստ ե, նրան տրորուժ են յերկար թորքով և աստիճանաբար նրան տալիս են կլոր ձև:

Խնամքում աշխատանքներում ինչպես ներքին, նույն պես և
արտաքին անկյունների վերջնական կարգավորման համար գործ
են ածում շաբաններ, Շաբանները դրվում են ըստ քանոնների,
ինչպես այդ արվում են առ քիվերը դուրս բերելիս (վորի մասին
կխոսենք հետագալում):


Սյուներն ու պիլյաստրները.—Վերոհիշյալ հիմնական կանոն-ները պահպաննելով, դժվար չե դուրս բերել նաև պիլյաստր կամ սյուն։ Որինակի համար՝ վերցնենք ուղղանկյուն կտրվածք ունեցող մի սյուն (նկ. 40 Ա)։ Սյունի գանձունակներում կպցնում են



Նկ. 40. Սյունի սվաղելը՝ քանոնի գեր կատարող տախտակներ կիրառելով.
Քանոնի գեր կատարող տախտակներ, այնպես, վոր նրանց ա, ճ,
Ա և Շ կողերն ուղղաձիգ լինեն ըստ ուղղորդի և իրենց մակերե-
վուլթի սահմանից զուրս չեկած լինեն 15—20 մմ, ալինինքն՝ տ-
պագա սվաղի հաստության չափ: Ա—Ճ և Ա—Շ մակերեւուլթներին
սվաղ են խփում և թորքով կամ քանոնը վրայից տանելով հար-
թացնում են այդ տախտակների զուրս մնացած մասի բարձրության
հավասար: Ապա այդ տախտակները հանում են և տեղափոխում
են արդեն սվաղված և քիչ պնդացած մակերեւուլթների վրա (Նկ.
40 Բ): Քանոնների Յ, Ճ, և Յ և կողերը դրվում են ըստ ուղղոր-
դի: Յ—Ճ և Յ—Ա մակերեւուլթները լցվում ու հարթացվում են,
ինչպես նկարագրեցինք: Քանոնի գեր կատարող տախտակները
հանելուց հետո զենքը հարթում են թորքով կամ կտրիչներով:

Պիլաստրի կարգավորումը սյունի կտրդավորումից տաք-
քերվում և նրանով, վոր պիլաստրի վոչ թե 4, այլ միայն 3
կողմերն են մշակվում: Պիլաստրի անկյունները լերբեմն դուրս
են բերվում շաբլոններով:

Լւսամուտների յեկ դռների ականցների (անցների) կազմակարումն.—Մոտավորապես նույն ձևով են կարգավորում նաև լուսամուտների ու դռների շետքերը (զրանդիները): Տվյալ դեպքում ամենից առաջ, սվաղած պատի վրա կատում են մի հորիզոնական գիծ, վորը ցույց ե տալիս լուսամուտների կամ դռների ականցների վերևների յեղբազիծը: Այս գիծը տանելն անհրաժեշտ է, վորպեսզի տվյալ հարկի բոլոր լուսամուտները միևնույն բարձրության լինեն: Նույնը վերաբերում է նաև դռներին:



Նկ. 41. Շեղերի կարգավորումը.
Ապա այդ գծի համաձայն, լուսամուտի ականոցից վերև,
ամբարտակ են քանոնը կամ քանոնի գեր կատարող ա տախտա-
կը (Նկ. 41): Քանոնի արտաքին ծալքը մոտ 20 մմ. զուրս և մը-
կը նույն շարքածքից, ինչպես այդ ցուց ե տված նկարում ա տառով
իսկ 6 տառով նշանակած ե լուսամուտի շրջանակը: Սվալքաշը
շտղախը դնելով քանոնի և շրջանակի միջև, հարթացնում և թոր-
քով: Վարպետն այս աշխատանքի ժամանակ պետք ե հետեւ, փոք-
րագական բոլորովին չծածկի արձանակը. հարկավոր ե վոր չորս
կողմից ել շրջանակի՝ ներսի Յատկերը մոտ 2 սմ ազատ լինեն-
շաղախից: Այդ յերկացող մասն անվանենք ուս:

Վորպեսզի ուսը շրջանակի բոլոր կողմերում միենույն լայ-
նությունն ունենա, նույնպես և աշխատանքը հեշտացնելու նպա-
ակով գործ են ածում բ շարլոնը, վոր կոչվում և անկյանացուց:

Անկյունացուցը շինում են մի կտոր տախտակից, վորի տերկարությունը քիչ ավելի պիտի լինի լուսամուտի վերևի լայնությունից (նկ. 42): Անկյունացուցի մի ծալը կտրում են նԵՐ անկյունով, վորի աշխատանքի ժամանակ զնում են շրջանակի մի քառորդի վրա: Անկյունացուցի մլուս Շ ծալը հենվում է քանոնին: Անկյունացուցի մի ծալը սեղմելով շրջանակի քառորդին,



Եկ. 42. Անկյունացույց՝ լուսամուտի ջեղը կարգավորելու համար.

իսկ մըուս ծայրը—քանոնին, անց են կացնում շրջանակի. ամբողջ վերկարությամբ. այդպիսով ստացվում և լուսամուտի վերեի կանոնավոր մակերեսու լիթը: Անկյունացուցի նՅ մասը շրջանակի վրա կթողնի շաղախից ազատ ուսը

Ապա չափում են լուսամուտի ականոցի շեպերը և ուղղորդի ոգնությամբ դնում են քանոնի դեր կատարող տախտակները, վորից հետո աշխատանքը տարվում է նկարագրած ձևով՝ կամ անկյունագույց գործածելով՝ կամ առանց նրան:

2 U P S t F

1. Ի՞նչ է կոկումը և ինչ տարբերություն կա սովորական սվաղը կոկելու և բեռնե մակերևությունը կոկելու մեջ:
 2. Յի՞րք և ինչպես են կատարում կոկումը:
 3. Ի՞նչ նպատակով և ի՞նչպես են յարկաթացնում ցեմենտի սվաղը:
 4. Ցույց տվիք, փրկն և ներսի անկյունը և փրկն և դրսի անկյունը:
 5. Քեզումների ժամանակ ինչներ յեն դիմում քանոնի գեր կատարող տախա-
մաների ոգնության:
 6. Ի՞նչպես պետք ե սվաղել աղյուսի ոլիլյաստը. պատմեցեք սկսած ազ-
տառանքի առաջին մոմենտից:
 7. Նույնը՝ փայտե քառակուսի պյունի մասին:
 8. Ի՞նչպես կարդալորել լուսամուտի այնպիսի ուշանոցը, վորի շեղերի
ուղիղ են:

ԳԼՈՒԽ V

ՔԵՎԵՐԻ (ԿԱՐՆԻԶՆԵՐԻ) ԳՈՏԽՆԵՐԻ ՅԵԿ ԶԱՐԴԵՐԻ ԴՈՒՐ
ԲԵՐԵԼԸ


Կարնիզներ, լենթաղեղներ, սանդղիկներ (վերնախարիսխ) պարակալներ (հալիչնիկ), պիլցաստրեր և այլ զարդեր զուրս բերելու ամբողջ աշխատանքը, իրենց բոլոր հախաղատրաստական աշխատանքների հետ միասին, պատկանում են բարձր կվալիֆիա աշխատանքներին: Իսկ այս գրքում կի նպատակն են անկացիայի աշխատանքներին: Իսկ այս գրքում կի նպատակն են անփորձ, գործ կվալիֆիկացիայի բանվորի գիտությունը բարձրացնել մինչև միջակ կվալիֆիկացիայի բանվորի մակերեսույթը Ռուսական արտեզանք կտանք միայն անհրաժեշտ և բավարար ցուցմունք, վորպեսզի միջակ կվալիֆիկացիայի սվատքաշն իրեն մի փոքր ծանոթ զգա նման աշխատանքներին:

ՀԱՅԻՈՒՆԵՐԻ ՊԱՏՐԱՍԵԼԸ

Կաթելլը.—Շաբախնը կտրում են 18—25 մմ հաստության ուղիղ-
դած տախտակից: Զարդի յերեսագիծը (պրոֆիլը) նկարում են
այս տախտակի կամ վահանի վրա, ապա տվելորդ մասերը սղո-
ցով դուրս են կտրում: Դրանից հետո բարակ յերկաթի թերթից
կտրում են ճիշտ նույն ձևի պրոֆիլ և կիպ խփում են շաբախի
աջ կողմանին յերեսին, իսկ նրա հակառակ յերեսի յեզրը թեք
կտրում են պրոֆիլի յերկարությամբ: Պրոֆիլի բոլոր անկյունն-
ներն ու անհարթությունները կորում են խարտոցով կամ ապա-
կե թղթով: Շատ կարեւու ե, վեր յերկաթի պրոֆիլի անկյունները
մաքուր կտրված լինեն և ճշտությամբ համընկնեն փայտե պրո-
ֆիլի հետ: Պրոֆիլի նույնիսկ չնչին պակասությունները կփչաց-
նեն զարդը:

ՊըսՓիլը կարելի յե յերկաթով չպատռվ բայց բեկութ-
կարնիզն այնպես կոկ չի ստացվի և կորություններն ու բեկութ-
հերը պարզ չեն յերեա:

Հավաելիք.—Ամբողջ շաբլոնի հավաքելն այսպես և կատարվում (նկ. 43): Շաբլոնի գ տախտակը յերկաթից կտրած պլրոֆի լի հետ միասին ուղղի անկյունով պինդ կպցնում են ճ սահնակին և ամրացնում են Յ շեղակներով (թեք հենարաններով): Աշխատանքի ժամանակ շաբլոնը շարժում են նրան ուղղություն տվող յերկու՝ Ռ—Ռ չորսվակների (բրուսոկների) միջով, վորոնք ամրացրած են լինում այն մակերեսույթին, վորի վրա պետք է դուրս բերեն կարնիզը: Այդ չորսվակները ծառայում են վորպես վերին և ստորին քանոններ:



Նկ. 43. Կարնիզը դուրս բերող շաբլոն.

ՔԱՆՈՆՆԵՐԻ ԴՆԵԼԻ

Կարնիզի վորակը խոշոր չափով կախված է քանոնները դնելու ճշտությունից:

Քանոնները պետք են շինվեն ուղիղ, պինդ և մաքուր ոնդած չորսվակներից: Ցածի քանոնը ավելի հաստ են շինվում և ունի 4×6 սմ կտրվածք, հակառակ դեպքում նա կարող է ծովել, վորից կարնիզի գծերն ել նրա հետ կծովեն:

Վերի քանոնը պետք են լինի բարակ, բայց լայն և պիտի ունենա 2½—3 սմ հաստություն, իսկ լայնությունը՝ 2 անգամ ավելի:

Ցածի քանոնը նրա համար են, վոր շաբլոնը նրա վրայով շարժվի, իսկ վերևի քանոնը նրա համար են, վոր շաբլոնը հենցի նրա վրա:

Քանոններն ալսպես են տեղադրում:—վոչ վերջնական սվասի մակերեսուլիթի վրա դնում են ցածի քանոնը և ամրացնում են մակերեսով կամ ալերբաստրով: Քանոնը պետք է կիպ կաչի մակերեսին, վորպեսզի աշխատանքի ժամանակ չծովի: Ապա նրա քեռութիւն, վորպեսզի աշխատանքի ժամանակ չծովի: Ապա նրա վրա դնում են շաբլոնը և վերելում դնում ու կպցնում են վերի վրա դնում են շաբլոնը և վերելում դնում ու կպցնում են վերի քանոնը, այսպես, վոր շաբլոնի լեզուը շրջավի վերի քանոնին: Քանոնը այսպես կամ ալերբաստրով ատուգում են նրանց դրվածքի կանոնավորությունը:

Ցեթե կարնիզը լերկար ել լինելու և այդ պատճառով պետք են նոր քանոններ դնել, այս քանոնները պետք են շինված լինեն չիշտ նույն կտրվածքն ունեցող չորսվակներից: այս նոր քանոնները դրվում են առաջինների շարունակությամբ, իսկ առանցները բռնում են ալերբաստրով:

ԶԱՐԴԵՐ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼԻ

Այս մակերեսուլիթը, վորի վրա կարնիզ պիտի դուրս բերվի, նույն կերպ են նախապատրաստում, ինչպես սվասի դեպքում, այսինքն՝ մաքրում են փոշուց ու կեղտից, ինթե պետք են, կտկառում են, թրջում, բաղդադի լին խփում և ալին: Ապա դասավորում են քանոնները և ջրիկ շաղախ են պատրաստում ցողելու համար, վորը և խփում են ու հարթացնում քափշայով: Հետեւյալ ծեփը թանձը են անում, և հենց նա սկսում է հովանալ շաբլոնը դնում են քանոնների միջև և առաջն կերպով խաղացնում են առաջ: Փոքր կարնիզների դեպքում շաբլոնը շարժում են 1—2 մարդ, խռով կարնիզների դեպքում՝ 3—4 մարդ: Շարժելու ժամանակ նա շաբլոնը սեղմում են քանոններին: Շարժվելու ժամանակ նա շաղախի ավելորդ մասերը և գրանով ձևավորում են սահմանվող պըռփիլը: Կտրտած շաղախը թափիլում և սահմանվող կտրում են շաղախի ավելորդ մասերը, վրայիլում և սահմանվող կամ թորքի վրա, վորը տանում են մի առանձին բանվոր՝ քայլառ քալի հետեւելով շարժվող շաբլոնին: Հաղաքած շաղախին ածում են քալի հետեւելով շարժվող շաբլոնին: Հաղաքած շաղախին ավագի արկղը՝ թիմակով խառնում, արորում են և նորից խփում են ավագի արկղը: Ցածի վարդի լայնությունը կեռ ևս իր հետքը չեղարնիզի այն տեղերին, վորտեղ շաբլոնը գեռ ևս իր հետքը չեղարնիզի արկղը շարժում են ձախից գեղվի աշ, այսինքն՝ յերկաթե լեզուը դեպի առաջ:

Հաղախի այդ կերպ խփելը և նրա վրայից նորից շաբլոն քաշելը կրկնվում են այնքան, մինչև վոր կարնիզի մակերեսուլիթի վրա ստացվում են շաբլոնի պարզ ուրվագիծը: Դրանից հետո մի վրա ստացվում են շաբլոնի պարզ ուրվագիծը:

քանի անգամ ել հետ ու առաջ են տանում կարնիզի վրայով՝ վորպեսզի հնարավոր լինի վրան ծածկույթ կատարել։ Ծածկույթի համար ջրիկ շաղախ են պատրաստում մաղից լավ անցկացրած կրից և մանր մաղով մաղած տլեբաստրից։ Այս շաղախը խփում են կարնիզին և շաբլոնը նորից տանում են վրայից՝ այս անգամ աջից դեպի ձախ։ Այդպես կրկնում են մի քանի անգամ, մինչև վոր կարնիզի մակերևույթը կոկվի ու կանոնավորվի։ Պատրաստի կարնիզն այլիս վոչ մի տրորում կամ պոտում չի պահանջում։

Քանոնները հանելուց առաջ մակերևույթի վրա նշաններ են անում։ Դա ապահովում է այն, վոր այս մակերևույթի հետ հատվող մյուս մակերևույթի վրա քանոնները ճշտությամբ դրվեն։ Առանց այս նախազգույղության կարող է պատահել, վոր հարեան կարնիզներն իրար հետ չհամընկնեն։

Յեթի հարկավոր ել լինում մեծ ծեփեր անել, կարնիզի տակ տախտակներ են խփում կամ մակերևույթին մեխերի վրա հյուսվածք են անում։

Ընդհանուր առմամբ, սվաղվող կարնիզի վորակը վատացնորդ պատճառներին պետք ել վերագրել։

ա) շաբլոնի վոչ բավարար մաքրելը.

բ) քանոնների անկանոն ոնդելը.

գ) քանոնների անկանոն դասավորելը.

դ) հաստ ծեփեր խփելը, առանց նախազգույղացման հարկավոր միջոցներ ձեռք առնելու։

ե) մատերիալների և շաղախի վատ հատկությունը,

զ) շաղախի առանձին շերտերը քաշելու, մեջ լերկարատելունդատումները, վորոնց շնորհիվ նախորդ շերտերն արդեն խիստ պնդացած են լինում։

Սնկյունները կարգի բերելը.—Զ կարնիզների հատման տեղերում անկյունները ստիպված են լինում ձեռքով դուրս բերել։ Այդ նպատակով անկյունին խփում են նույն բաղադրության շաղախի, ինչ վոր գործ ե ածվում կարնիզի համար, աստ կարիչներով, հատիչներով և քերիչներով ձևավորում նկատիչ կամ կտրոցը (նկ. 44). հատիչ կամ կտրոց, են անկյունը [չատիչը կամ կտրոցը (նկ. 44)] փայտե մի փոքր քանոն ե՝ մի ծալը թեք կտրած, որած և մետաղով պատած։ Այս աշխատանքը կոչվում ե անկյունների կարգավորում։



